

## ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

### Գագիկ Տեր-Հարությունյան

Ներկայիս համակարգային ճգնաժամի պայմաններում՝ աշխարհում տեղի է ունենում գաղափարախոսական հիմնադրույթների վերաբժեռում: Արդյունքում՝ էական փոփոխություններ են տեղի ունենում նաև քաղաքականության ոլորտում, որոնցից ամենաէականը բազմաբեւեռ աշխարհակարգի կայացումն է: Այդ նոր համակարգի աշխարհաքաղաքական ուրվագծերը խիստ անորոշ են, իսկ խաղի կանոնները դեռևս մշակված չեն: Դա թելադրում է միջազգային հարաբերությունների սուբյեկտներին՝ ճշգրտել իրենց քաղաքականության մարտավարությունը եւ փորձել սկզբունքորեն նոր ռազմավարություն մշակել:

Վերոնշյալ միտումները հասկանալի են. միաբեւեռ համակարգում գերակայող Միացյալ Նահանգների քաղաքական փիլիսոփայությունը սկսել էին համարժեք ընկալել եւ ըստ այդմ գործել շատերը: Այսօր գլոբալ ուժի կենտրոնները մի քանիսն են, նրանց միջեւ եղած հակասությունները ենթարկվում են նոր սառը պատերազմի տրամաբանությանը եւ վերածվում ռազմական (լոկալ պատերազմների տեսքով), դիվանագիտական ու տեղեկատվական հակամարտությունների: Համաձայն փորձագետների մոտեցման, ներկայիս տնտեսական ճգնաժամը նույնպես հանդիսանում է այդ պատերազմի աշխարհատնտեսական բաղադրիչը. էներգակիրների եւ այլ բնական պաշարների գների անկումը, Ռուսաստան–Ուկրաինա «գազային պատերազմը», արտադրական հզորությունների կրճատումը եւ նմանատիպ այլ բացասական երեւոյթները միանշանակորեն առավել շատ հարվածում են Ռուսաստանին, Չինաստանին, ինչը հիշեցնում է առաջին սառը պատերազմի տարիներին ԱՄՆ կիրառած տնտեսական պայքարը «սոցճամբարի» դեմ:

Հատկանշական է նաև, որ այսօր հակասությունները խորանում են ոչ միայն ավանդական մրցակիցների (ԱՄՆ–ՌԴ, ԱՄՆ–ՉԺՀ, ԱՄՆ–իսլամական երկրներ), այլև, քողարկված տեսքով, նաև ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ: Օրինակ, 2008-ի հուլիսին Իռլանդիայում տեղի ունեցած հանրաքվեում «Լիսաբոնյան համաձայնագրի» (այն պետք է փոխարիներ նախկինում չընդունված «եվրասահմանադրությանը») մերժումը ԵՄ պաշտոնական շրջանակները պայմանավորում են Պենտագոնի եւ ԿՀՎ գործունեությամբ (այդ խնդրի կապակցությամբ կատարվեց անգամ ոչ պաշտոնական հետաքննություն):

Ստեղծված նոր իրադրությունում քաղաքական զարգացումներին տրված գնահատականները տարաբնույթ են: Սակայն մեկ հարցում քաղաքական-վերլուծաբանական հանրությունը կարծես թե համերաշխ է. բազմաբեւեռ աշխարհակարգի կայացումը մեծ վտանգներ է պարունակում, եւ այդ համատեքստում՝ նոր պատերազմների ծագման հավանականությունն անխուսափելիորեն աճելու է:

**Ապագայի հռետես սցենարներ.** Քաղաքական կանխատեսումներ կատարելու մշակույթն առավել զարգացած է ԱՄՆ-ում, եւ այդ առումով ուշագրավ է 2008-ին ամերիկյան հետախուզական ծառայությունների՝ Սենատ ներկայացրած զեկույցը, որտեղ, նկատի ունենալով Հյուսիսային Կորեան եւ Իրանը, նշվում են զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) տարածման հետ կապված վտանգները: Ուշագրավ է, որ բացի Իրաքում, Աֆղանստանում եւ Պակիստանում ստեղծված բարդ իրադրությունը դիտարկելուց, զեկույցում տեղ են գտել Եվրոպայում հնարավոր քաղաքական անկայունության առաջացման հիմնախնդիրները: Մեկ այլ՝ Ներքին անվտանգության ծառայության պատրաստած զեկուցագրում իրատեսական է համարվում, որ մոտակա հինգ տարիներին Միացյալ Նահանգները կարող է ենթարկվել ահաբեկչական հարձակման ՁՈՁ կիրառմամբ: Առանձին վերլուծության կարիք ունի նաեւ ԱՄՆ Հետախուզության ազգային խորհրդի (NIC) «Գլոբալ միտումներ - 2025» զեկույցը, որը նույնպես տագնապալի երանգներ է պարունակում:

Ռուսաստանյան վերլուծաբանները նույնպես լավատես չեն: Նրանցից ոմանք հակված են այն մտքին, թե պատերազմական իրավիճակը շարունակական բնույթ է կրում արդեն սեպտեմբերի 11-ից հետո, եւ նման մոտեցման հետ դժվար է չհամաձայնել: Մյուսները կարծում են, թե ստեղծված ճգնաժամը կարող է հանգեցնել լայնածավալ, միջուկային պատերազմի: Հատկանշական է, որ 2008-ին ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը վերանայել են իրենց ռազմական դոկտրինները, ռազմական բարեփոխումներ են իրագործում ԵՄ-ը, Մեծ Բրիտանիան եւ Չինաստանը:

Վերոնշյալ կանխատեսումները, ըստ ամենայնի, հիմնավորված են. ի տարբերություն երկբեւեռ համակարգի (ԱՄՆ – ԽՍՀՄ), բազմաբեւեռ աշխարհում դեռեւս չեն ձեւավորվել «զսպման քաղաքականության» մեխանիզմները, բացակայում են ստրատեգիական նշանակության սպառազինության սահմանափակման շուրջ պայմանագրերը, ինչը մեծացնում է լայնածավալ, զուցե անգամ՝ միջուկային պատերազմի հավանականությունը:

**Մերձավոր եւ Միջին Արեւելք (ՄՄԱ).** Նախորդ տարիներին (հատկապես 2003–2007թթ.) «ռիսկային» տարածաշրջան էր համարվում ՄՄԱ-ն, որտեղ Իրանի միջուկային ծրագրի եւ իրաքյան զարգացումների առիթով ծայրահեղ սրվել էին Միացյալ Նահանգների եւ նրա դաշնակից Իսրայելի հարաբերություններն Իրանի հետ: Ներկայումս (չնայած 2008թ. դեկտեմբերին սկսված պաղեստինա-իսրայելական հերթական զինված հակամարտությանը) տպավորությունն այնպիսին է, որ կողմերը ձեռք են բերել ոչ պաշտոնական պայմանավորվածություններ, ինչը փոքր-ինչ պարպել է անհանդուրժողականության մթնոլորտը եւ այդպիսով նվազեցրել միջուկային պատերազմի վտանգը ՄՄԱ-ում: Դրա մասին է վկայում «Հիզբալլահի» պասիվ կեցվածքը ներկայիս հակամարտությունում եւ մասնավորապես այն փաստը, որ ս.թ. հունվարի 11-ին այաթոլա Ալի Յամենեին իր հրովարտակով արգելեց Իրանի քաղաքացիներին մասնակցել ընթացող պատերազմին եւ ահաբեկչություններ կատարել Իսրայելի դեմ: Ելնելով ներկայիս միտումներից՝ չի կարելի բացառել նաեւ այսօր արտասովոր թվացող այն սցենարը, որ ապագայում, մասնատված Իրաքի պարագայում, տարածաշրջանում ԱՄՆ հենակետերը լինեն Իսրայելը, Իրանը (այս կապակցությամբ պետք է հիշել, որ նախկինում Իսրայել–Իրան հարաբերությունները բավական սերտ են եղել) եւ քրդական պետական կազմավորումները: Նկատենք, որ դասական ռազմավարության տեսանկյունից դա ավելի քան օպտիմալ կառուցվածք է ամերիկացիների համար, քանի որ կողմերի միջեւ եղած հակասություններն առավել կմեծացնեն ԱՄՆ դերակատարումը:

Ներկայումս «միջուկային շեշտադրումները» տեղափոխվել են Յնդկաստան–Պակիստան հարաբերությունների հարթություն: Ինչպես ժամանակին դիպուկ նշել է մի քաղաքական մեկնաբան, «եթե սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ եւ ԱՄՆ տնօրինության տակ գտնվող հրթիռների մեծ քանակությունը կանխարգելող գործոն էր, քանի որ պատերազմի դեպքում երկու տերություններն էլ կարող էին ոչնչանալ, ապա միջուկային հրթիռների սահմանափակ քանակը Յնդկաստանի եւ Պակիստանի պարագայում հակառակ էֆեկտ ունի. փոխադարձ համաձայնության բացակայությունը եւ հակառակորդի նախահարձակ լինելու դեպքում անելանելի իրադրության մեջ հայտնվելու ահը մեծացնում են հրթիռներ կիրառելու ցանկությունը»:

**Պակիստան–Յնդկաստան առձակատումը.** Երբ 2008թ. օգոստոսի 19-ին, ընդդիմության ճնշման տակ, Պակիստանի նախագահ Փերվեզ Մուշարաֆը հրաժարական տվեց, միջազգային հանրությունը հիմնական

նում հետեւում էր Չարավային Օսիայի շուրջ ընթացող վրաց-ռուսական պատերազմի զարգացումներին, եւ այլ քաղաքական իրադարձությունները մղվել էին երկրորդ պլան: Մինչդեռ Կենտրոնական Ասիան, դասական աշխարհաքաղաքականության տեսանկյունից, առանցքային տարածաշրջան է, եւ գերտերությունները մշտապես ձգտել են վերահսկողություն սահմանել Եվրասիայի այդ հատվածի վրա: Չմանրամասնելով պատմական իրադարձությունները եւ ներկայիս ռազմաքաղաքական զարգացումները՝ հիշենք, որ սեպտեմբերի 11-ից անմիջապես հետո ԱՄՆ առաջնային թիրախը դարձավ Աֆղանստանը: Հատկանշական է, որ 2001-ին դարձյալ իրագործվեց քաղաքական մի տեխնոլոգիա, որը պայմանականորեն կարելի է անվանել «բացասական գործընթացներից՝ դրական արդյունք»։ հիմք ընդունելով եւ օգտագործելով սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը (բացասական գործընթաց), Միացյալ Նահանգները (ՆԱՏՕ-ի հետ համատեղ) տրանսֆորմացրեց այն աշխարհաքաղաքական խոշոր նվաճման եւ ռազմական ներկայություն հաստատեց Կենտրոնական Ասիայում, իր հիմնական մրցակիցների՝ ՌԴ եւ ՉԺՀ հարեւանությամբ (դրական արդյունք): Նախկինում նման տեխնոլոգիա կիրառվել է, օրինակ, 1941թ. դեկտեմբերին, երբ Փերլ Չարբորի միջադեպն օգտագործվեց երկրորդ աշխարհամարտին մասնակցելու համար: Այդ քաղաքական հայեցակարգում ներկայումս առավել կարեւորվում է տեղեկատվական գործոնը, ինչն էլ թույլ է տալիս որոշ հետազոտողների ներկայացնել այն որպես «երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների» բաղադրամաս:

Վերադառնալով նախագահ Մուշարաֆի արտաքին եւ ներքին ուժերի ճնշման տակ պարտադրված հրաժարականին՝ տեղեկատվական հոսքերի վերլուծությունից կարելի է փաստել, որ նոր իշխանությունների օրոք զգալիորեն նվազեց Պակիստան պետության առանց այն էլ ոչ բարձր ղեկավարելիությունը: Որոշ վարկածների համաձայն, նման միտումը համընկնում է Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ այդ տարածաշրջանում ունեցած ծրագրերի հետ, որոնք ենթադրում են ապակայունացնել տարածաշրջանը (եւնելով «ղեկավարվող քառս» կոչված հայեցակարգից) եւ արդյունքում, մասնավորապես, փորձել թուլացնել իրենց հիմնական մրցակից Չինաստանին:

Վերոնշյալ վարկածի շրջանակներում նման ռազմավարության առկայության մասին կարող է վկայել 2008-ի նոյեմբերին հնդկական Մումբայ քաղաքի վրա կատարված ահաբեկչական հարձակումը, որի կազմակերպումը վերագրվեց պակիստանյան իշխանություններին եւ հատկապես այդ երկրի Միջգերատեսչային հետախուզությանը՝ ISI-ին, որը տարածա-

շրջանի ամենահզոր հատուկ ծառայությունն է համարվում<sup>1</sup>: Արդյունքում՝ Յնդկաստան – Պակիստան հարաբերությունները ծայր աստիճան սրվեցին, զորքերը կուտակվեցին սահմանին, իսկ ՋԼՄ-ում սկսեցին դիտարկել միջուկային պատերազմի հնարավորությունը: Հատկանշական է, որ դեռևս 1997–2001թթ. ԱՄՆ վերլուծական – զինվորական ընտրանու կողմից մշակվել էին «Ասիա - 2025» եւ «Միացյալ տեսլական - 2020» փաստաթղթերը, որոնցում, մասնավորապես, մշակվել էին Պակիստան – Յնդկաստան հնարավոր միջուկային առճակատման սցենարները: Դրանցից հատկապես ուշագրավ է հետեւյալը.

*«Նոր կարգեր Հարավային Ասիայում» սցենարը. 2010թ. Պակիստանը գտնվում է խոր ճգնաժամում. տնտեսությունն անկում է ապրում, իշխանությունների անկարողության պատճառով երկիրն ապակայունացնում է, որոշ ցեղեր ապստամբում են, ակտիվանում են իսլամական ծայրահեղականները, որոնք 2012թ. ներխուժում եւ իրենց վերահսկողության տակ են վերցնում հնդկական Քաշմիր նահանգը: Յնդկաստանը, որն ԱՄՆ-ի հետ համագործակցության շնորհիվ առաջ է անցել Չինաստանից եւ դարձել տարածաշրջանի առաջատարը, պահանջում է Պակիստանից զսպել ծայրահեղականներին եւ դուրս բերել նրանց Քաշմիրից, սակայն թուլացած պակիստանյան իշխանություններն ի վիճակի չեն լինում կատարել այդ պահանջը: Յնդիկները լրացուցիչ զորքեր են մտցնում նահանգ: Պակիստանը պահանջում է դուրս բերել հնդկական զորքերը, եւ նրան այդ խնդրում աջակցում է Չինաստանը, որը սկսում է կենտրոնացնել իր զինուժը հնդկական սահմանի մոտ: Ջարգացումներին միջամտում է ԱՄՆ-ը, որը տարածաշրջան նավատորմ է ուղարկում եւ վճարանորոգում պահանջում է ՉԺՀ-ից չեզոքություն պահպանել: Հակամարտությունը հասնում է գագաթնակետին, երբ Յնդկաստանը, երկյուղելով Պակիստանի կողմից ՁՈՁ կիրառումից, ոչ միջուկային հրթիռային հարված է հասցնում այդ երկրի ՁՈՁ հենակետերին եւ ահաբեկիչների ճամբարներին (մեկ այլ սցենարի համաձայն, ռազմական գործողությունների առիթ է հանդիսանում Քաշմիրի երկնքում Պակիստանի կողմից արձակված*

<sup>1</sup> Ոչ միայն հնդկական կառավարության, այլեւ անկախ դիտորդների կարծիքով, ահաբեկչությունը մշակված էր հենց հատուկ ծառայությունների կողմից, քանի որ լավ կազմակերպված էր եւ տեխնիկապես հագեցած, այդ թվում՝ տեղանքում կողմնորոշվելու էլեկտրոնային համակարգով: Նշենք նաեւ, որ հատուկ ծառայությունների ոլորտի փորձագետները գրեթե միահամուռ են այն հարցում, որ «Թալիբան» շարժումը եւ Բեն Լադենը պակիստանյան ISI-ի եւ ԿՀՎ համատեղ աշխատանքի արդյունք են հանդիսանում:

հրթիռով նախարարներ եւ բարձրաստիճան սպաներ տեղափոխող հնդկական ինքնաթիռի կործանումը): Պակիստանը՝ ի պատասխան, միջուկային զենք է կիրառում Յնդկաստանի դեմ: Սանձագերծված միջուկային պատերազմի (որին Յնդկաստանի կողմից ակտիվորեն մասնակցում է ԱՄՆ-ը՝ հրթիռային հարվածներ հասցնելով պակիստանյան միջուկային հենակետերին) եւ ստեղծված քառսի արդյունքում 2020-ին Պակիստանը որպես պետություն դադարում է գոյություն ունենալ: Մինչդեռ Յնդկաստանը վերածվում է անվիճելի առաջատարի, որի հետ ձգտում են սերտ հարաբերություններ հաստատել գրեթե բոլոր ասիական երկրները եւ առաջին հերթին՝ Իրանը:

Վերոնշյալ սցենարը ԱՄՆ շահերի տեսանկյունից գնահատվում է ամենաբարենպաստը: Պատերազմի հետեւանքով նրա հիմնական մրցակից Չինաստանը մղվում է երկրորդ պլան, իսկ ասիական առաջատարների դերակատարումը ստանձնում են ԱՄՆ ռազմավարական գործընկեր Յնդկաստանը եւ Իրանը: Առաջինի հետ ամերիկացիները վերջին տարիներին զգալիորեն բարձրացրել են համագործակցության (այդ թվում՝ միջուկային ոլորտում) մակարդակը: Ինչպես արդեն նշել ենք վերը, ԱՄՆ-ը Իրանի նկատմամբ վարում է նոր ռազմավարություն, որի իրականացման պարագայում այդ երկրների միջեւ հարաբերությունները կարող են եւ գործընկերային բնույթ կրել:

**Որոշ հետեւություններ.** Պետք է նշել, որ ամերիկյան մշակումներում առկա են նաեւ Չինաստանի գերակայությունը հաստատող տարբերակներ, որոնք ենթադրում են ԱՄՆ դուրսմղում Չարավային Ասիայից եւ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանից (այսպես կոչված «Չգոր Չինաստան» սցենարը): Ելնելով ներկայիս միտումներից՝ կարելի է կարծել, որ նման սցենարն ավելի իրատեսական է, քան «Նոր կարգեր Չարավային Ասիայում» սցենարը: Միեւնույն ժամանակ, բազմաբեւեռ համակարգում ԱՄՆ-ը «առաջինն է հավասարների մեջ», եւ նրա կողմից հետեւողականորեն իրագործվող ռազմավարությունը կարող է էսպես ազդել ցանկացած բնականոն թվացող գործընթացի վրա:

Ի դեպ, չի կարելի բացառել նաեւ տրամագծորեն հակառակ սցենարների հնարավորությունը. հունվարի 12-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Բ.Օբամայի խորհրդատու Ջեյմս Բեյգինսկին Պեկինում կոչ արեց ստեղծել ԱՄՆ – ՉԺՊ «մեծ երկյակ» (G 2), որն ի զորու կլինի կարգավորել գլոբալ հիմնական խնդիրները: Սակայն դեռեւս հայտնի չէ, թե ինչպես է այդ առաջարկին արձագանքել Չինաստանը:

## **ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ Ռուբեն Մելքոնյան**

*Հայության տարբեր խմբերի փոխադարձ ընկալման խնդիրն այսօր վերստին կարեւորություն է ձեռք բերում՝ այս անգամ կապված Թուրքիայի հայության հետ: Հայաստանյան գիտական-վերլուծական շրջանակներում Թուրքիայում բռնի կրոնափոխված (իսլամացված) հայության հարցը սկսել է ակտիվանալ վերջերս: Տասնամյակներով անհայտ, փակ խնդիրը հրապարակ գալով՝ առաջացնում է ոչ միանշանակ արձագանքներ: Առաջին հերթին, կա օբյեկտիվ անտեղյակության խնդիր, որը հետզհետե վերանում է՝ իր հետ բերելով ինչպես հարցականներ, այնպես էլ պատասխաններ: Այնպես որ, այս փուլում խնդրի առաջ բերած խիստ հակասական (չարդարացված լավատեսականից մինչևե միհիլիստական) գնահատականները պետք է համարել օրինաչափ:*

Փաստերը ցույց են տալիս, որ նույնիսկ պոլսահայ համայնքում հայության տարբեր խմբերի փոխադարձ ընկալման խնդիրը շատ սուր է դրված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրիստոնյա պոլսահայերն ավելի շատ են շփվում Թուրքիայի բռնի կրոնափոխ հայության եւ նրանց հետնորդների տարբեր խմբերի հետ՝ ստորեւ կփորձենք անդրադառնալ նրանց փոխադարձ ընկալման խնդրի առանձին տարրերին:

Պետք է ասել, որ մեծ մասամբ տարբեր կարծրատիպերով, կադապարներով առաջնորդվող եւ դրանց մեծ տեղ տվող պոլսահայ համայնքն այնքան էլ հակված չէ հայության այլ՝ իրեն չնմանվող խմբերի հետ շփվելու: Այս հարցում բացառություն չեն նաեւ հայաստանցիները, որոնք մեծ մասամբ մինչևե այսօր էլ պոլսահայերի կողմից ընկալվում են «ուրիշի», «օտարի» կատեգորիայում: Այն, որ ուժացման տարբեր աստիճաններում գտնվող Թուրքիայի հայության եւ պոլսահայության փոխադարձ ընկալման խնդիրը գնալով ավելի արդիական եւ օրակարգային նշանակություն է ձեռք բերում, ցույց է տալիս այնտեղի հայկական մամուլում սույն խնդրի վերաբերյալ տպագրված հոդվածների աճը:

Այսպես, պոլսահայ մտավորական, «Ակոս» թերթի լրագրող Բագրատ Եսդուզյանը հատկապես վերջին շրջանում հաճախ է անդրադառնում այդ խնդրին, եւ այստեղ հարկ ենք համարում ընդարձակ մեջբերումներ

կատարել նրա հողվածներից, քանի որ նա, լինելով պոլսահայ համայնքի անդամ, կարողացել է անաչառ, կառուցողական դիրքերից եւ, որ ամենակարեւորն է, «ներսից» պատկերել խնդիրը. «Թուրքիոյ ներկայ օրակարգի գլխաւոր նիւթերէն մին կը հանդիսանայ բնակչութեան ինքնութիւնը: Նախապաշարուած անհամար միտքեր, կամ կարծիքներ, նոյնիսկ հաստատումներ փուլ կու գան այժմ: Մինչեւ մօտ անցեալ, երկրի վարիչները շատ կը սիրէին 99,9 տոկոսով մահմետական համարել Թուրքիոյ բնակչութիւնը: Երկրի 3այ հաւաքականութիւնն ալ իւրացուցած կերելի այս համոզումը: Թէ չի գիտակցիր, որ իրմէ զատ հայեր ալ կան այս երկրի մէջ, եւ թէ չուզեր լսել անոնց գոյութիւնը: **Մեր քաղքենի ըմբռնման մէջ տեղ չկայ այն հայուն որ քրիստոնէայ չէ** (ընդգծումը մերն է - Ռ. Մ.): Նոյնիսկ մինչեւ մօտ անցեալին կրնայինք յամառիլ 3այ չկոչել այն, որ հայախօս չէ: Այսօր ալ լսել չենք ուզեր բոլոր այն հայերուն մասին, որոնց կենցաղը նման չէ մեր քաղքենի սովորութիւններուն: Բայց կան: Կան հայեր, որոնք փարած են իրենց ազգային ինքնութեան, ամբողջովին զանց առնելով կրօնական պատկանելիութիւնը: Կան քրիստոնէաներ, որոնք փարած են իրենց հաւատքին, առանց գիտակցելու ազգային պատկանելիութիւնը: Կան հայախօսներ, որոնք դեռ նոր գիւտը կընեն իրենց նախնիքներուն ազգային ինքնութեան: Ոմանք մնացած են քրտաբնակ շրջաններու մէջ, քրտացած: Ոմանք մնացած են թրքաբնակ շրջաններու մէջ, թրքացած: Իսկ ոմանք, եւ բաւական թիւով ոմանք, հետքը որոնելով իրենց նախնիքներուն, կու գան մեր եկեղեցւոյ դուռը: Իսկ դուռը բա՞ց է արդեօք իրենց դէմ: Երբ գաւառի հայ մը մկրտութեան, պսակի կամ թաղման համար դիմում կատարէ մեր հոգեւոր իշխանութեանց, քահանայի պահանջքով ի՞նչ պատասխան կը ստանայ»:

Ի դեպ, Բագրատ Էսդուգյանն այս նույն խնդիրներին է անդրադարձել նաեւ հայաստանյան «Չետք» (Չետաքննող լրագրողների ընկերակցութիւն) ինտերնետային կայքին տված հարցազրույցում. «Երբ ասում ենք Թուրքիայի հայ հավաքականություն, պետք է նկատի ունենալ Ստամբուլի հայ հավաքականությունը: Երբ ասում ենք Ստամբուլի հավաքականություն, պետք է հասկանալ մի որոշ քաղքենի կենցաղ: Այդ քաղքենի կենցաղը հայ տեսնել կուզե միայն իր նմանը: Այսինքն՝ հայը պետք է որոշ թաղերի մեջ բնակվի, ամառները պետք է կղզի գնա, պետք է որոշ հաճախականությամբ եկեղեցի այցելի: Եվ հայն այդպիսի կաղապարված սահմաններ պետք է ունենա, ինչպես որ այս քաղաքի ընդհանուր մեծամասնությունը գոյացրել է: Իսկ այն հայը, որ կհակասի այս համայնապատկերին, ընդհանրապես շփոթով կդիտվի, երբեմն ստորագնահատությամբ կդիտվի: Այս օրինակին կմտնեն թե հայաստանցիները եւ թե այն

հայերը, որոնք երկար տարիներ մնացել են Ստամբուլից դուրս վայրերում, իրենց ինքնությունը պահած են կամ նույնիսկ կորցրել են, բայց այսօր գիտակցում են: Ահավասիկ այդ զանգվածն էլ չի կարողանում պոլսահայերի ամբողջության մեջ թափանցել»:

Պետք է շեշտել, որ նման իրավիճակի հետ հաճախ բախվում ենք նաև Եվրոպայում. այստեղ կրոնադարձված (քրիստոնեություն վերընդունած) կամ այդ ճանապարհի վրա գտնվող հայության եւ քրիստոնեությունը պահպանած հայության միջև կան մի շարք անջրպետներ՝ պայմանավորված լեզվական, կենցաղային եւ այլ տարբերություններով, որոնք դրդում են մարդկանց խորթացման:

Անվիճելի է, որ ծայտյալ եւ իսլամացված հայության (հատկապես կրոնադարձվածների) ճիշտ ընկալման, ինչպես նաև ինտեգրման հարցում լուրջ անելիքներ ունի Հայ Առաքելական եկեղեցին: Եվ Պոլսո Հայոց պատրիարքության երբեմն ոչ զրկաբաց վերաբերմունքը քրիստոնեություն վերընդունել ցանկացող հայերի նկատմամբ (որը կարող է ունենալ տարբեր պատճառներ՝ կապված զգուշավորության, թուրքական պետության կողմից կիրառվող սահմանափակումների, ինչպես նաև տարբեր շահախնդրությունների հնարավոր վտանգի հետ), թերևս, դատապարտելի է:

Ակնհայտ է նաև, որ ներկայումս պոլսահայ դիսկուրսում ծառայել է «ո՞վ է հայը» հարցը, որին անդրադարձել է նաև վերոհիշյալ Բագրատ Էսդուզյանը «Ակոսի» էջերում. «Իսկապես, ո՞վ է Հայը: Հայ ըսելով ի՞նչ կընկալենք: Օրինակ, մենք՝ պոլսահայերս, ինչե՞ր կակնկալենք Հայէն: Արդեօք կարելի՞ է որ Հայը հայախօս չըլլայ: Փորձառութեամբ սորվեցանք, կարելի է: Հայաստանաբնակ Հայն ալ նոյնպես պիտի յոժարի՞ արդեօք հայախօս չեղողը Հայ համարելու: Ով գիտէ, թերևս ալ ան դեռ չունի մեր ունեցած փորձառութիւնը: Հայը կարելի՞ է որ քրիստոնեայ չըլլայ: Կըրնա՞նք պատկերացնել իսլամացած մէկը, որ ըսէ, թէ Հայ է: Ապրեցանք ու տեսանք որ կարելի է: Հրանդի սպանութեան յաջորդող օրը, ամբողջ գիշեր հերթ պահեցինք Ակոս-ի դրան առջեւ, Սայաթ Նովացիներս, Քարտեշ Թիւրքիւլեր խմբակի տղաքը, Տոսթլար Գորոսու խումբէն երիտասարդներ ու տասնեակ մը սասունցիներ: Այդ գիշեր հանդիպեցանք հաւատացեալ մահմետական հայերու, որոնք եկած էին զօրակցելու մերօրեայ անենամեծ նահատակին՝ Հրանդ Տինքին յիշատակը յարգելու: Համոզուեացանք որ այս ալ կարելի էր»: Հոդվածագիրը գալիս է հաստատելու մեր կողմից բազմիցս արտահայտված այն միտքը, որ Թուրքիայի ծայտյալ եւ իսլամացված հայության եւ նրանց հետնորդների ճիշտ ընկալումը, նրանց հանդեպ մոտեցումների հստակեցումը կարող են գալ հարցի համակողմանի ճանաչումից, հասկանալուց հետո միայն: Նկատելի է, որ Էսդուզյանը

անթաքույց երկյուղով ու վերապահումով է մոտենում հայաստանցիներիս կողմից Թուրքիայի ուժացած հայության ընկալման հարցին եւ դա անելիս իրավացիորեն հիմք է ընդունում այս հարցում իրենց համեմատ մեր «անփորձ», այն է՝ անտեղյակ լինելը: Եսդուզյանն անուղղակիորեն ընդունում է նաեւ, որ հենց իրենք՝ պոլսահայերը, ներկայումս խնդիր ունեն ճանաչել զավառներում վերապրած, ուժացման տարբեր աստիճանի վրա գտնվող հայերի հետնորդներին, քանի որ օբյեկտիվ պատճառներով չեն տիրապետում խնդրին ամբողջությամբ եւ խորությամբ. *«Տասը տարի առաջ ո՞վ լսած էր Ատրշամանի շուրջ քսան հազար հայերու մասին: Վերջին երկու տարիներուն մեր համայնքը ծանօթացաւ այդ գաւառին, քանի հոնկէ տասնեակ աշակերտներ կու գան ուսանելու մեր ազգային վարժարանները: Միթէ մեր երկիրը գաղտնի կամ կորած հայերու պահածո՞յ է»:*

Մեր կարծիքով, ամենեւին երկրորդական չէ եւ նույնիսկ ուշաբժան է իսլամացված հայերի եւ նրանց հետնորդների ընկալման հարցը հենց իրենց շրջապատի թուրքերի, քրդերի, մի խոսքով՝ մուսուլմանների կողմից: Գաղտնիք չէ, որ Թուրքիայում ո՛չ պետական եւ ո՛չ էլ հասարակական մակարդակով կրոնափոխ հայերին «իսկական մուսուլման» չեն համարել եւ ներկայումս էլ այդ մտածելակերպը չի փոխվել: Ասվածն ապացուցող փաստերը բազմաթիվ են. բավական է միայն նշել հանրապետական Թուրքիայում պետականորեն կիրառված որոշ պատժամիջոցների ընթացքում կրոնափոխ հայերին ընդգրկելու հանգամանքը: Յենց իրենք՝ կրոնափոխ հայերն են խոստովանում, որ իսլամ ընդունելու, կրոնով նախատեսվող բոլոր արարողություններն անելու պարագայում անգամ շրջապատը նրանց չի համարում իրական մուսուլման, եւ գյավուր, դյոնմե (կրոնափոխ) որակումները միշտ ուղեկցում են նրանց: Օրինակ, 85-ամյա սասունցի կրոնափոխ հայուհի Ջեյնեփ Յըլմազը, որն ունի բարեպաշտ մուսուլմանի համբավ եւ շրջապատում կարծում են, որ իր մուսուլման ամուսնուց էլ ավելի լավ մուսուլման է, ասում է. *«Մենք հայ էինք, մուսուլման դարձանք, սակայն երբ տեղը գալիս է, մուսուլմանները մեզ կրկին ասում են. «Դուք հայ եք»: Սրանից չենք կարողանում ազատվել»:* Բազրատ Եսդուզյանը նույնպես անդրադառնալով այս խնդրին՝ նշում է, որ իսլամացված հայերին եւ նրանց հետնորդներին մինչեւ այժմ էլ մուսուլմանները հայ են համարում. *«Երբեք չեն ընդունում, ասում են՝ հա, էդ գյուղը գյավուրի գյուղ է, նրանք հայ են: Շրջակայքում չես կարող փոխել, սերնդեսերունդ գալիս է, որ դա հայի գյուղ է»:*

Յետաքրքիր է նաեւ իմանալ թուրք ազգայնամուլների կարծիքը՝ ո՞վ է թուրքը հարցի շուրջ եւ այս նույն համատեքստում տեսնել, թե նրանք

ինչպես են վերաբերվում ուժացման տարբեր աստիճաններում գտնվող ոչ թուրքերին: Այսպես. պանթյուրքիզմի ռահվիրաներից մեկը՝ Նիհալ Աթուրը (1905-1975թթ.), պատասխանելով ո՞վ է թուրքը հարցին, դեռելս 1934թ. «Օրբուն» ամսագրում հրատարակված «Թուրք ռասան = Թուրք ազգի» վերնագրով հոդվածում ասում է. *«Թուրքերի համար ազգը ամեն ինչից առաջ արյան խնդիր է: Այսինքն՝ նա, ով ասում է՝ թուրք եմ, պետք է թուրքական ցեղից լինի: Սակայն օտար արյուն կրող մարդը, եթե նույնիսկ թուրքերենից բացի այլ լեզու չիմանա էլ, նա թուրք չէ»:*

Ամփոփելով նշենք, որ իսլամացված հայության տարբեր խմբերի հանդեպ մենք պետք է ունենանք տարբերակված մոտեցում եւ, որ ամենակարելու է, սպասումներ: Ազգային գիտակցությունը եւ շատ հաճախ էթնիկ նկարագիրը պահպանած ծայտայալ հայերի՝ Հայության մեջ վերին-տեգրվելու փորձերը եւ ձգտումները պետք է դրական վերաբերմունքի արժանանան մեր կողմից: Անհրաժեշտ է կարողանալ հաղթահարել շատ հաճախ օբյեկտիվ պատճառներով մեր միջեւ առաջացած տարբերությունները:

Իսլամացված հայերի եւ նրանց խառնածին հետնորդների մեջ նկատվող երեւույթները տարբեր են. մի մասը, ինչպես ասել ենք, հպարտանում է իր հայկական արմատներով եւ առանձնահատուկ վերաբերմունք սկսում ցուցաբերել դրա հանդեպ, մի մասը փորձում է անտեսել այդ հանգամանքը, որպեսզի հասարակության մեջ չարժանանա «գյավուր» կամ «թշնամի հայի» որակման, իսկ մի մասն ունի նաեւ հոգեբանական պատճառներով պայմանավորված թշնամական վերաբերմունք հայության քրիստոնյա հատվածի հանդեպ:

Անշուշտ, ցավալի է, որ ի դեմս իսլամացված հայերի ուժացած կամ խառնածին հետնորդների՝ մենք հաճախ ականատեսն ենք լինում մեր ազգին, հայկական մարդաբանական տիպին բնորոշ հատկանիշների, մարդկային որակների աղճատված կամ «փչացած» ձեւերի: Սակայն, այնուամենայնիվ, պետք է գիտակցել, որ կա մի զանգված, որն ունի հայկական արմատներ եւ որ, ամենակարելու է, հետաքրքրվում է իր արմատներով, փորձում ճանաչել ինքն իրեն, ուստի իսլամացված հայերի եւ նրանց խառնածին հետնորդների գոյությունը չպետք է լիովին մերժել, այլ ընդհակառակը՝ մշակել նրանց հետ հարաբերվելու մեթոդներ, գտնել շփման եզրեր:

## ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

### Սեւակ Սարուխանյան

*2009թ. մայիսին սպասվող նախագահական ընտրություններն Իրանում եւ դրանց հնարավոր ընթացքն այն հիմնական գործընթացներն են, որոնք գալիք ամիսների ընթացքում անմիջականորեն ազդելու են այս երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության վրա:*

#### **Բարեփոխիչների «անակնկալը»**

Հունվարի 13-ին Իրանի նախկին նախագահ Մ.խաթամին հանդես եկավ անսպասելի հայտարարությամբ, թե ինքն անպայման մասնակցելու է գալիք նախագահական ընտրություններին, իսկ եթե ինչ-որ պատճառներով նրա մասնակցությունը տեղի չունենա, ապա ինքը եւ բարեփոխիչների ճամբարը ներկայացնող «Պայքարող հոգեւորականների միությունը» նախագահական աթոռի համար պայքարում կունենան ուրիշ թեկնածու՝ նախկին վարչապետ Հոսեյն Մուսավին:

Խաթամիի հայտարարությունը բավական լուրջ փոփոխություններ կարող է մտցնել Իրանի ներքաղաքական կյանքում: Մինչեւ վերջերս կարծիք կար, թե նախագահական աթոռի համար հիմնական պայքարն ընթանալու է պահպանողականների ճամբարը ներկայացնող թեկնածուների միջեւ, իսկ բարեփոխիչների ճամբարից հիմնական թեկնածու էր համարվում «Պայքարող հոգեւորականների միությունը» ներկայացնող Մ.Քյարուբին, որի հեղինակությունը Իրանի բնակչության շրջանում բավական ցածր է:

Մ.խաթամիի հնարավոր վերադարձը Իրանի ներքաղաքական կյանք լուրջ ազդեցություն կարող է ունենալ նախագահական ընտրությունների ընթացքի եւ արդյունքի վրա: Իշխանության 8 տարիներին (1997–2005) Մ.խաթամին, իհարկե, չի կատարել նախընտրական խոստումների մեծ մասը, սակայն նրա հեղինակությունն իրանական հասարակության մեջ շարունակել է մնալ բարձր: Նշենք, որ 2005-ին, երբ Մ.խաթամին թողնում էր պաշտոնը, իրանցիների շրջանում կատարված սոցիոլոգիական հարցումները ցույց տվեցին, որ հարցախույզի մասնակիցների կեսից ավելին կցանկանար, որ խաթամին շարունակի զբաղեցնել նախագահի պաշտոնը, թեւեւ դա արգելված է սահմանադրությամբ:

Կարելոր է նաեւ, որ բարեփոխիչների մյուս թեկնածուն, որը Խաթամիի՝ նախագահական ընտրություններին չմասնակցելու դեպքում դնելու է թեկնածությունը, Յ.Մուսավին է: Թեւ Մուսավին ներկայացնում է բարեփոխիչների ճամբարը, նրան կարելի է համարել նաեւ սահմանափակ պահպանողական եւ հին հեղափոխական: 1981–1989 թվականներին Յ.Մուսավին եղել է Իրանի վարչապետը եւ գտնվել Իրանի այն ժամանակվա նախագահ, այժմ՝ հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեյի ենթակայության տակ, ով եւ անմիջականորեն ղեկավարել է կառավարության աշխատանքները:

Ներկայումս զբաղեցնելով Արվեստների իրանական ակադեմիայի նախագահի պաշտոնը՝ Յ.Մուսավին ներքաղաքական եւ արտաքին քաղաքական հարցերով վարչապետի պաշտոնից դուրս գալուց հետո երբեք հանդես չի եկել ոչ մի հայտարարությամբ: Այսօր նա ստվերում գտնվող քաղաքական գործիչ է, որի մասին հայտնի է միայն այն, որ կարողանում է լավ հարաբերություններ պահպանել թե՛ Ալի Խամենեյիի, թե՛ նախկին ու ներկա նախագահներ Ա.Յաշեմի-Ռաֆսանջանիի, Մ.Խաթամիի եւ Մ.Ահմադինեժադի հետ: Բացառված չէ, որ թեժացող նախընտրական պայքարի պայմաններում Յ.Մուսավիի թեկնածությունը կարող են պաշտպանել ոչ միայն բարեփոխիչները, այլեւ հին պահպանողականները, որոնք Մ.Ահմադինեժադի արտաքին քաղաքական եւ սոցիալ-տնտեսական բարեփոխումների հարցերում դրսևորվող ծայրահեղականության հակառակորդներ են: Շատ բան, իհարկե, կախված կլինի նրանից, թե կկարողանան արդյոք գործող նախագահից դժգոհ պահպանողականները սեփական այլընտրանքային թեկնածու առաջադրել:

Նշենք, որ Յ.Մուսավին ազգությամբ ադրբեջանցի է, սակայն նրա վարչապետության շրջանի հետ կապված հիմնական սկանդալը եղել է այն, որ պաշտոնական այցով ժամանելով Թուրքիա՝ հրաժարվել է այցելել Ք.Աթաթյուրքի դամբարան եւ ծաղկեպսակ դնել նրա շիրմին:

### **Պահպանողականների հնարավոր թեկնածուները**

Պահպանողականների ճամբարի կողմից գալիք նախագահական ընտրությունների հիմնական հնարավոր թեկնածուներ ներկայումս, համաձայն իրանական լրատվամիջոցների, համարվում են իրանական խորհրդարանի խոսնակ Ա. Լարիջանին եւ Թեհրանի քաղաքապետ Մ.Քալիբաֆը: Վերջիններս մասնակցել են 2005թ. ընտրություններին, սակայն առաջին փուլում տանուլ են տվել Ա.Յաշեմի-Ռաֆսանջանիին եւ Մ.Ահմադինեժադին: Թե՛ Լարիջանիի, թե՛ Քալիբաֆի կողմից դեռևս

պաշտոնական հայտարարություններ չեն արվել նախագահական ընտրություններին մասնակցության մասին: Սակայն երկու գործիչների համար կան բոլոր քաղաքական հիմքերն իրենց թեկնածություններն առաջադրելու համար:

Ալի Լարիջանին անցած տարի ամրապնդել է սեփական դիրքերը Իրանի քաղաքական դաշտում՝ ընտրվելով իսլամական հանրապետության խորհրդարանի խոսնակի պաշտոնում: Անցած ամիսների ընթացքում Ա.Լարիջանին կարողացել է նոր լիցք հաղորդել խորհրդարանի աշխատանքներին, ակտիվացրել է օրենսդիր գործունեությունը եւ մեծ ուշադրություն է սկսել հատկացնել սոցիալական հարցերի լուծմանն ուղղված քննարկումներին ու որոշումների կայացմանը, ինչը մեծացրել է իր եւ խորհրդարանի հեղինակությունը հասարակության շրջանում:

Ա.Լարիջանին ակտիվ է նաեւ արտաքին քաղաքականության ոլորտում, ինչի վկայությունն է արաբա-իսրայելական վերջին ռազմական հակամարտության կարգավորման հարցերի քննարկման նպատակով նրա կատարած այցն Անկարա եւ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանի հետ բանակցությունները:

Բավական ամուր եւ Ա.Լարիջանի կապերը հոգեւոր-կրոնական կառույցներում: Բացի նրանից, որ Լարիջանին բարձրաստիճան շիա հոգեւորականի զավակ է, նա նաեւ մեծ հեղինակություն վայելող այաթուլա Մ.Մոտահարիի փեսան է, իսկ նրա եղբայրը՝ Ս.Լարիջանին, մեծ ազդեցություն վայելող Պահապանների խորհրդի անդամ է: Ա.Լարիջանին դասական պահպանողական է, որոնց հիմնական բնորոշիչներից է ամուր կապը կրոնական ինստիտուտների եւ գործիչների հետ: Այս պայմաններում կարելի է ակնկալել, որ գալիք նախագահական ընտրություններին Ա.Լարիջանի մասնակցության պարագայում նրան կաջակցեն բավական ազդեցիկ կրոնական գործիչներ, որոնք գոհ չեն Մ.Ահմադինեժադի իշխանության տարիներին տեղ գտած ներքին զարգացումներից:

Նշենք, որ այդ զարգացումների հիմնական դրսեւորումներից է այն, որ գործող նախագահի աջակցությամբ եւ միջամտությամբ Իրանի խորհրդարան եւ իշխանական համակարգ թափանցեցին մեծ թվով նախկին ռազմական գործիչներ, հետախույզներ, ոստիկանության նախկին աշխատակիցներ, եւ այս ամենը տեղի ունեցավ հիմնականում կրոնական գործիչների ազդեցության նվազման հաշվին:

Ինչ վերաբերում է Մ.Քալիբաֆին, ապա նա եւս բավական լուրջ սպառնալիք է ներկայացնում Մ.Ահմադինեժադի վերընտրմանը: Չնայած անցած ընտրություններում Մ.Քալիբաֆը պարտվել է, ներկայումս նրա ընտրման հնարավորություններն անհամեմատ ավելին են: Սա պայմանա-

վորված է նրանով, որ 2005 թվականից զբաղեցնելով Թեհրանի քաղաքապետի պաշտոնը՝ նա լուրջ հաջողությունների է հասել բազմամիլիոնանոց մայրաքաղաքի եւ դրա արվարձանների (ընդհանուր բնակչությունը՝ 20 միլիոն) սոցիալական, բնապահպանական, տրանսպորտային, սպորտին եւ երիտասարդությանն առնչվող հարցերի լուծման ուղղությամբ:

2008թ. Մ.Քալիբաֆը ճանաչվել է աշխարհի 8 լավագույն քաղաքապետերից մեկը: Նրա հեղինակությունը երկրի մայրաքաղաքում բավական մեծ է: Բարձր է նաեւ նրա հեղինակությունն ուժային կառույցներում, քանի որ Մ.Քալիբաֆը վեց տարի ղեկավարել է Իրանի ոստիկանությունը:

Չնայած Թեհրանի քաղաքապետը պաշտոնապես չի հայտարարել, թե մասնակցելու է նախագահական ընտրություններին, նրա թեկնածության առաջադրումն առավել քան հավանական է: Անցած տարվա ընթացքում Մ.Քալիբաֆն ակտիվացրել է գործունեությունը արտաքին քաղաքականության ոլորտում, հարցազրույցներով եւ հայտարարություններով հանդես է եկել արեւմտյան մամուլում, ինչը կարող է վկայել նրա հավակնությունների մասին:

Ուշագրավ է նաեւ, որ Թեհրանի քաղաքապետն այն եզակի պահպանողականներից է, ով հրապարակայնորեն հանդես է գալիս ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարգավորման օգտին: 2008թ. հոկտեմբերի 13-ին Քալիբաֆը հայտարարեց, որ իրանա-ամերիկյան երկխոսությունից եւ հարաբերությունների կարգավորումից «կշահի աշխարհը, կշահեն ամերիկյան եւ իրանական հասարակությունները»:

## **Չետելություններ**

Նշված գործընթացներն ու զարգացումները խոսում են Իրանի ներքաղաքական կյանքում եւ իշխանական համակարգում հնարավոր վերադասավորումների մասին: Գալիք նախագահական ընտրությունների արդյունքը եւ դրանցում գործող նախագահ Մ.Ահմադինեժադի հաղթանակը չի կարելի կանխատեսելի համարել: Շատ բան կախված կլինի իրանա-ամերիկյան հարաբերություններում հնարավոր դրական փոփոխություններից, ինչպես նաեւ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի՝ Իրանի հասարակության սոցիալական վիճակի վրա բացասական ազդեցության չափերից: Վերջիններս կարող են նախընտրական գործընթացները տանել ոչգծային ուղղությամբ եւ սոցիալ-քաղաքական ցնցումների կամ վերադասավորումների հիմք հանդիսանալ:

## **ԱՄԵՐԻԿԱ - ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՁ**

### ***Սարգիս Հարությունյան***

Չնայած այսօր Միացյալ Նահանգների նոր վարչակազմի գործունեության հետ կապված ամենից մեծ սպասելիքները վերաբերում են ֆինանսատնտեսական ոլորտին, սակայն միջազգային քաղաքականության բնագավառում նույնպես գոյություն ունեն հարցեր, որոնց վերաբերյալ Միացյալ Նահանգների 44-րդ նախագահը պետք է ոչ դյուրին որոշումներ կայացնի:

Լարվածության չդադարող աճը Աֆղանստան – Պակիստան գծում եւ Հնդկաստան – Կենտրոնական Ասիա ուղղությամբ սպասվող զարգացումները, Ամանորի նախօրեին բռնկված իսրայելա-պաղեստինյան հերթական պատերազմը եւ ընդհանուր իրավիճակը Մերձավոր Արեւելքում, ռուս-ուկրաինական զգալի ճգնաժամը եւ դրանից բխող աշխարհաքաղաքական հետեւանքները հետխորհրդային տարածքում ու Արեւելյան Եվրոպայում. սա հարցերի ոչ ամբողջական ցանկն է, որոնց հետ կապված Վաշինգտոնում պետք է հիմնարար մոտեցումներ մշակվեն: Ավելին, գալով Սպիտակ տուն՝ Օբաման կպարզի, որ ներկայացվածում գոյություն ունեն հարցեր, ուր ժամանակն աշխատում է ԱՄՆ-ի դեմ:

Հետեւաբար, ողջ հարցն այն է, թե ամերիկյան նոր վարչակազմում ինչքանով են ի վիճակի ու պատրաստ փոփոխություններ մտցնել արտաքին ռազմավարության մեջ, որովհետեւ հստակ է մի բան՝ արդեն փոխված աշխարհում ԱՄՆ-ի համար անհնար կլինի շարժվել 1990-ական թթ. ռազմավարությամբ: Ընդ որում, սա գիտակցում էին նաեւ Բուշ-կրտսերի վարչակազմում, որովհետեւ բազմաթիվ են օրինակները, երբ Օբաման պարզապես իրականացնելու է այն փոփոխությունները, որոնց վերաբերյալ որոշումները կայացվել են դեռեւս Բուշ-կրտսերի օրոք:

Ամերիկա-իրանական հարաբերությունների հեռանկարի հարցը կարելուրագույններից մեկն է: Մեզ համար հարցն էական է երկու պատճառով.

- այն երբեք չի առնչվել սոսկ երկու երկրներին եւ ունեցել է տարածաշրջանային հետեւանքներ,
- ժամանակի ընթացքում Հայաստանի ազգային անվտանգության համար ամերիկա-իրանական հարաբերություններն իրենց մշանակությամբ զգալիորեն մոտեցել են ամերիկա-ռուսական հարաբերություններին:

## Իրավիճակային դիտարկում

1979թ. իսլամական հեղափոխությունից ի վեր՝ մոտ 30 տարվա ընթացքում առաջին անգամ՝ 2008թ. նոյեմբերին, Իրանի նախագահը որոշեց շնորհավորել Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնում ընտրված անձին: Անշուշտ, Մահմուդ Ահմադինեժադի քայլը տրամաբանական շարունակությունն էր ավելի վաղ նկատված այն իրադարձությունների, որոնք 2007թ. վերջից պարզորոշ վկայում էին ամերիկա-իրանական ընթացող ջերմացման մասին<sup>1</sup>: Սակայն պակաս կարելուր հանգամանք չէ այն, որ ամերիկյան նոր վարչակազմի գործունեության հենց սկզբում երկու կողմերն էլ որոշել են տեղեկատվական նոր միջավայրում շարունակել իրենց փոխհարաբերությունները<sup>2</sup>:

Այդ իմաստով հատկապես ուշագրավ էր իսրայելա-պաղեստինյան վերջին պատերազմը: Չնայած իրանական կողմի ավանդական կոշտ հայտարարություններին, փաստն այն է, որ պատերազմի ողջ ընթացքում՝ ավելի քան 20 օր, Թեհրանը որեւէ գործնական քայլ չձեռնարկեց Իսրայելի դեմ:

Չայտնի է, որ հունվարի 8-ին եւ 14-ին հարավային Լիբանանի տարածքից Իսրայելի հյուսիսային բնակավայրերի ուղղությամբ ընդհանուր առմամբ արձակվեցին վեց հրթիռներ: Այդ հանգամանքը շատերին հիմք տվեց ենթադրելու, որ իրանական կողմը նպատակ ունի իր ազդեցության ներքո գործող լիբանանյան «Հիզբալլահ» խմբավորման միջոցով հարկադրել Իսրայելին պատերազմել երկու ճակատով: Սակայն փաստն այն է, որ պատերազմն ավարտվեց, իսկ «Հիզբալլահը» զերծ մնաց ռազմական գործողությունների ծավալումից: Նշվածն ավելի ակնառու է դառնում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ պատերազմի օրերին՝ հունվարի 2-3-ը, Դամասկոս, իսկ հետո նաեւ Բեյրութ այցելեց Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Սայիդ Ջալալին, ով հանդիպումներ ունեցավ ինչպես Սիրիայի ու Լիբանանի ղեկավարների, այնպես էլ «Համաս», «Հիզբալլահ» եւ «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատ» կազմակերպությունների առաջնորդների հետ: Քիչ հավանական է, որ Իրանից ֆինանսական, քաղաքական ու ռազմական ծավալուն աջակցություն ստացող կազմակերպությունները մերժեին իրանական քաղաքական ղեկավարության որոշումը՝ հարվածներ հասցնել Իսրայելի հյուսիսային սահմանների երկայնքով<sup>3</sup>:

Հետեւությունը կարող է լինել մեկը: Եթե կասկածից վեր է, որ Թեհրանը չի կարող նպատակ ունենալ զիջումների գնալ Իսրայելին, ապա իրանա-

կան կողմի նշված դիրքորոշումը կարող էր հետաքրքրել միայն Վաշինգտոնին: Եթե 2006թ., երբ «Հիգբալլահը» պատերազմական գործողություններ էր վարում Իսրայելի դեմ, Թեհրանում նպատակ կար Վաշինգտոնին ի ցույց դնել սեփական հնարավորությունները Մերձավոր Արևելքում, ապա ներկայում, երբ ԱՄՆ-ի հետ պայմանավորվածությունները ընթացքի մեջ են, իրանական կողմը չէր կարող նման խնդիր ունենալ: Ավելի հավանական է ներկայանում այն տարբերակը, որ զսպելով «Հիգբալլահին»<sup>4</sup> այս անգամ Իրանում որոշել էին ամերիկացիներին ներկայացնել իրենց հետ համագործակցելու օգուտները:

### **Չետելություններ**

Առնվազն երկու ուղղությամբ նկատվող զարգացումները հարկադրում են Միացյալ Նահանգներին փոխհամաձայնության հասնել Իրանի հետ: Առաջինը Ռուսաստանի ազդեցության աճն է հետխորհրդային տարածքում եւ Արևելյան Եվրոպայում, իսկ երկրորդը՝ Չնդկաստան – Կենտրոնական Ասիա գծում սպասվող զարգացումներն են:

Ռուսաստանի պարագայում իրանական կողմը կարող է ԱՄՆ-ին աջակցություն ցույց տալ վերջինիս համար էական երեք կետերում.

- իրավիճակի ընդհանուր կայունացում Մերձավոր Արևելքում, ինչը Վաշինգտոնին հնարավորություն կտա ավելի մեծ ռեսուրսներ կենտրոնացնել Մոսկվայի ուղղությամբ,
- մուտքի հնարավորություն դեպի Հարավային Կովկաս, Կասպից եւ Կենտրոնական Ասիա, ինչը Վաշինգտոնի համար, թերեւս, ունենա ավելի մեծ նշանակություն՝ հատկապես վրաց-ռուսական պատերազմից հետո,
- եւ վերջապես, դեպի Եվրոպա իրանական բնական գազի մատակարարում, ինչը կնվազեցնի Եվրոպական երկրների ու հատկապես Գերմանիայի կախվածությունը ռուսական էներգակիրներից, այսինքն՝ կթուլացնի Մոսկվայի ազդեցությունը Եվրոպական գործերում:

Ինչ վերաբերում է Չնդկաստան – Կենտրոնական Ասիա գծին, ապա այդ ուղղությամբ Թեհրանի դերակատարության նշանակությունը կարող է նոր ի հայտ գալ: Արդեն հայտնի է, որ Օբամայի վարչակազմի գործունեության գոնե սկզբնական շրջանում ԱՄՆ-ը ոչ միայն չի պատրաստվում հեռանալ Աֆղանստանից, այլեւ 30 հազարով մեծացնելու է իր ռազմուժի թվաքանակն այդ երկրում: Հաշվի առնելով խորացող անկայունությունը Պակիստանում եւ Չնդկաստանի հետ վերջինիս լարվող հարաբերությունները՝ չպետք է բացառել, որ առաջիկայում կարող է ստեղծվել մի

իրավիճակ, երբ դեպի Աֆղանստան ու Կենտրոնական Ասիա մուտք ունենալու համար ԱՄՆ-ին հարկավոր լինի Թեհրանի թույլտվությունը, որովհետև մյուս ճանապարհներն անցնում են Ռուսաստանով եւ Չինաստանով:

Գաղտնիք չէ, որ ներկայում իրանական ուղղությամբ Վաշինգտոնում թափ հավաքող տրամաբանությունը հետեւյալն է. Թեհրանի հետ պետք է վարվել այնպես, ինչպես ժամանակին Նիքսոնն արեց չինական ուղղությամբ: Հավանական է, որ ԱՄՆ-ը Իրանին զիջումներ անի տարածաշրջանային անվտանգության հարցերում եւ վերացնի տնտեսական սահմանափակումները: Սակայն հիմնական հարցը մնում է բաց՝ ի՞նչ պետք է անել իրանական միջուկային զենքի հետ:

<sup>1</sup> Այդ իրադարձություններից հարկ է առանձնացնել 2007թ. վերջին հրապարակված ԱՄՆ Ազգային հետախուզության խորհրդի զեկույցը, ուր որպես գլխավոր հետեւություն նշված էր, թե, ամենայն հավանականությամբ, Իրանը դադարեցրել է իր միջուկային զենքի ծրագիրը 2003թ. աշնանը: Մյուս կարելուր ցուցիչը 2008թ. օգոստոսին ձեռք բերված ամերիկա-իրաքյան պայմանավորվածությունն էր՝ մինչեւ 2011թ. ավարտը Իրաքում ամերիկյան զորքերի տեղակայման վերաբերյալ, ինչն անհնար կլիներ առանց իրանական կողմի համաձայնության:

<sup>2</sup> Օրինակ, երկու անգամ (դեկտեմբերի 7, 2008թ. եւ հունվարի 11, 2009թ.) իր հեռուստահարցազրույցների ժամանակ Բարաք Օբաման հայտարարեց, թե իրանական հարցը պետք է լուծվի դիվանագիտական ճանապարհով եւ իր վարչակազմը նպատակ ունի ներգրավել Իրանին տարածաշրջանային գործերի մեջ:

<sup>3</sup> Նշվածը հատկապես առնչվում է «Հիզբալլահին», որը 2006թ. ամռանը իրանական ռազմական փորձագետների աջակցությամբ կարողացավ հարկադրել Իսրայելին նահանջել, եւ այդ իմաստով միզուցե անփոխարինելի փորձ ունի իսրայելական ռազմական մեթենայի դեմ պայքարում:

<sup>4</sup> Չպետք է բացառել, որ Ջալալիի այցելությունը Դամասկոս եւ Բեյրութ իրականում ուներ այդ նպատակը:

## ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴՐԱՄԱ

### Արաքս Փաշայան

1947թ. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 187/II բանաձեւի համաձայն, Պաղեստինի տարածքում պետք է ստեղծվեին երկու՝ հրեական եւ արաբական պետություններ: Հրեական պետությանը հատկացվեց 14,1 հազ. քառ. կմ կամ Պաղեստինի տարածքի 56%-ը, իսկ արաբական պետությանը՝ 11,1 հազ. կամ պաղեստինյան տարածքի 43%-ը<sup>1</sup>: Պաղեստինի բաժանումը փաստորեն կատարվեց հոգուտ հրեաների, քանի որ այդ պահին, անգամ դրան հաջորդած հրեական ներգաղթից հետո, արաբները Պաղեստինում թվաքանակով երեք անգամ գերազանցում էին հրեաներին: Հրեաների ներգաղթն ու հաստատվելը Պաղեստինում եւ ի վերջո այնտեղ հրեական պետության ստեղծումն ի սկզբանե հակազդեցություն առաջացրին պաղեստինցիների շրջանում՝ վերածելով մինչ օրս չհանդարտվող քաղաքական եւ ռազմական դիմակայության: Արաբների թերեւս ամենամեծ բացթողումն այն էր, որ նրանք չհաշտվեցին Իսրայել պետության ստեղծման ու ՄԱԿ բանաձեւի հետ եւ ժամանակին չձեւավորեցին իրենց անկախ պետությունը՝ հնարավորություն տալով Իսրայելին հետագայում (1948<sup>2</sup> եւ 1967թթ.<sup>3</sup> արաբ-իսրայելական պատերազմների ընթացքում) օկուպացնել ամբողջ Պաղեստինի տարածքը՝ առաջ բերելով պաղեստինցի փախստականների հոծ ալիք:

2008թ. դեկտեմբերի 27-ից Իսրայելը օդային, ապա՝ ցամաքային ընդլայնված ռազմական գործողություններ ձեռնարկեց արդեն իսկ 18 ամիս շրջափակման եւ հումանիտար ճգնաժամի մեջ գտնվող Պաղեստինյան ինքնավարության մաս կազմող Ղազայի հատվածում<sup>4</sup>, որը տեւեց մոտ երեք շաբաթ: Ըստ իսրայելական պաշտոնական հայտարարությունների՝ Ցախալի գործողությունների նպատակը Ղազան վերահսկող իսլամական արմատական «Համաս» շարժման կողմից Իսրայելի տարածքի հրթիռակոծման մեկընդմիջտ կասեցումն էր, իսկ պաշտպանության նախարար Էհուդ Բարաքի խոսքերով՝ «ահաբեկչության ենթակառուցվածքների» ոչնչացումը: Դեկտեմբերի 27-ի մամլո ասուլիսում վարչապետ Է.Օլմերտը պատերազմի գլխավոր նպատակը համարեց երկրի հարավի անվտանգության բարելավումը:

Չի բացառվում, որ Իսրայելը հակամարտության այս փուլում, ըստ ամենայնի, նպատակ ուներ քաղաքական դաշտից հեռացնել «Համա-

սին»<sup>5</sup>, որը մինչ օրս չի ճանաչում Իսրայել պետության գոյության իրավունքը, գրավել ողջ Ղազախի հատվածը՝ կաթվածահար անելով Պաղեստինում անկախ արաբական պետություն ստեղծելու եւ Երուսաղեմի նկատմամբ հավակնություններ ունեցող պաղեստինցիների ձգտումները: Կարելի է ասել, որ իսրայելական ռազմական գործողությունները Ղազախում «Համասի» ղեկավարության ներքո ապրող պաղեստինցիների դեմ ուղղված իսկական հաշվեհարդարի էին նման:

Հունվարի 18-ին Իսրայելը, ընդառաջ գնալով միջնորդական ջանքերին, միակողմանի հրադադար հայտարարեց, որից 12 ժամ անց «Համասն» իր հերթին հայտարարեց մեկշաբաթյա զինադադար՝ իսրայելական կողմին զորքերի դուրսբերման հնարավորություն տալու նպատակով: Շատ փորձագետներ կանխատեսում էին, որ այն տեղի կունենա ԱՄՆ նորընտիր նախագահ Օբամայի երդմնակալությունից առաջ:

Հատկանշական է, որ երկու կողմերն էլ իրենց հաղթանակած են համարում: Ղազախում «Համասի» առաջնորդ Ի.Հանիյան պատերազմի արդյունքը որակեց «փառահեղ հաղթանակ», իսկ Երուսաղեմ այցելած եվրոպական երկրների ղեկավարներին է.Օլմերտը հավաստիացրեց, որ ռազմական գործողությունները հասել են իրենց նպատակին՝ թուլացրել «Համասի» կարողությունը, վերացրել երկրի անվտանգության սպառնալիքը, նպաստել կայուն հրադադարի հաստատմանը:

Սակայն առճակատումը կողմերի միջև դեռ շարունակվում է: Իսրայելը չի նշել զորքերի դուրսբերման ժամանակացույցը՝ մտավախություն ունենալով, որ ռազմական գործողությունները կարող են ամեն պահ վերսկսվել պաղեստինյան կողմից: Իսկ «Համասը» հայտարարել է, որ կշարունակի դիմակայությունը, քանի դեռ Իսրայելն ամբողջովին դուրս չի բերել զորքերը Ղազախից: «Համասը» պահանջում է, որպեսզի Իսրայելը դադարեցնի շրջափակումը, բացի բոլոր սահմանային անցուղիները:

Պաղեստինյան ինքնավարությունում Իսրայելի ռազմական գործողությունների եւ «Համասի» հակազդեցության վերաբերյալ միջազգային, այդ թվում՝ արաբական-իսլամական շրջանակներում հնչեցին տարբեր տեսակետներ: Պատերազմի սկզբում, որը համընկավ քրիստոնեական աշխարհում Սուրբ Ծննդյան տոների եւ Նոր տարվա հանդիսությունների հետ, տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ քարոզչական պատերազմը ծավալվեց հօգուտ Իսրայելի: Եվրամիության մի շարք ազդեցիկ երկրներ (այդ թվում՝ Գերմանիան), ինչպես նաեւ ԱՄՆ-ը, կոչ անելով պաղեստինա-իսրայելական հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով, ելնելով Իսրայելի հետ ունեցած ռազմավարական

գործընկերությունից, ստեղծված իրավիճակի հիմնական պատասխանատու համարեցին բացառապես «Համասի»՝ նշելով, որ Իսրայելն օրինական իրավունք ունի պաշտպանել իր տարածքները եւ բնակչությանը ահաբեկչությունից:

Հատկանշական է, որ «Համասի» դեմ որոշակի քննադատություն հնչեց նաեւ արաբական աշխարհում: Վերջինս մեղադրվում էր սեփական ժողովրդին որպես «կենդանի վահան» օգտագործելու, իր ռազմական հենակետերը բնակելի շրջաններում տեղադրելու եւ, ի վերջո, Իսրայելին հակապաղեստինյան գործողությունների հրահրելու մեջ, իսկ առանձին դեպքերում «Համասի» գործունեությունը կապվում էր արաբական խնդիրներին միջամտող Իրանի հետ, որը համարվում է վերջինիս սատարող ուժերից մեկը: Իսկ 2008թ. դեկտեմբերի 31-ին Կահիրեում արաբական պետությունների արտաքին գործերի նախարարների արտահերթ հանդիպման ժամանակ Սաուդյան Արաբիայի արտաքին գերատեսչության ղեկավար Սաուդ Ալ-Ֆեյսալը ներպաղեստինյան հակասությունները համարեց պաղեստինցիների ողբերգության պատճառներից մեկը՝ նկատի ունենալով «Համասի» եւ «Ֆաթիխ» միջեւ առճակատումը: Սակայն արաբական շրջանակներում հնչած առանձին տեսակետների համաձայն, եթե «Համասը» դիմակայեց նման լայնածավալ հարձակման, դա արդեն իսկ հաղթանակ է պաղեստինցիների համար:

Ղազայում իսրայելական ագրեսիան մեծ ընդվզում առաջ բերեց արաբական-իսլամական աշխարհում, այդ թվում՝ Եվրոպայի իսլամական համայնքներում: Աշխարհի բազմաթիվ մայրաքաղաքներում տեղի ունեցան հակաիսրայելական ցույցեր, արաբական աշխարհում հակաիսրայելական ավանդական դիսկուրսը նորից լայն շրջանառության մեջ դրվեց: Հակահրեական քարոզչությունն առանձին դեպքերում ստացավ ծայրահեղական շեշտադրումներ (Իսրայելի ոչնչացմանն ուղղված կոչերով) հատկապես իսլամ կրոնականների շրջանում:

Արաբական աշխարհում որոշակի քննադատություն հնչեց Եգիպտոսի հասցեին, որը պատերազմի ընթացքում (բացառությամբ որոշ արտակարգ դեպքերի) չբացեց Ռաֆահի անցակետը, որի համար Կահիրեն ուներ իր պատճառները: 2007-ի հունիսից ի վեր, երբ ՊԻ Ղազայի հատվածը սկսեց վերահսկվել «Համասի» կողմից, Եգիպտոսը փակեց Ռաֆահը՝ նշելով, որ կբացի այն, եթե անցուղին վերահսկեն ՊԻ-ն, Իսրայելը, ինչպես նաեւ միջազգային «կվարտետը»: Բացի այդ, Կահիրեն իր դիվանագիտական ներկայացուցչությունը Ղազայից տեղափոխեց Արեւմտյան ափ: Հատկանշական է, որ Եգիպտոսը, այդ թվում նաեւ Հորդանանը եւ Սաուդյան Արաբիան, մտավախություն ունեն, որ իսլամական կրոնաքաղաքական

շարժման՝ «Համասի» ազդեցությունը կարող է տարածվել նաեւ իրենց երկրներ:

Արաբական վարչակարգերը, որպես կանոն, բավարարվեցին Իսրայելի դեմ ուղղված քննադատությամբ՝ առանց դուրս գալու ընդունված նորմերի շրջանակներից, չնայած արաբական հասարակությունները սեփական իշխանություններից միշտ էլ ավելի կոշտ դիրքորոշում են ակնկալում: Սաուդ Ալ-Ֆեյսալը իսրայելական գործողությունները որակեց որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Աշխարհաքաղաքական տարբեր շահեր հետապնդող արաբական պետությունների նման կեցվածքն արդեն անփոփոխ իրականություն է, եթե հաշվի առնենք, որ պաղեստինյան խնդիրը վաղուց ի վեր ոչ թե արաբների, այլ պաղեստինցիների հարցն է, իսկ արաբական միասնության կամ իսլամական համերաշխության գաղափարները միշտ էլ ավելի շատ քարոզչական նշանակություն են ունեցել: Այս համատեքստում որոշակիորեն առանձնանում է Սիրիայի կոշտ եւ հետեւողական դիրքորոշումը, որն արաբ-իսրայելական հակամարտության հիմնական կողմերից եւ «Համասին» աջակցող երկրներից է: Պատահական չէ, որ «Համասի» ազդեցիկ քաղաքական դեմքերը գործում են Դամասկոսում:

Հատկանշական է, որ տարածաշրջանի դերակատարներից որոշակիորեն հակաիսրայելական էր Թուրքիայի արծագանքը, ինչը նաեւ կապված է իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության իսլամամետ կեցվածքի հետ: Երկրի վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Ալլահը կպատժի Իսրայելին՝ Ղազայում իրականացրած անմարդկային գործողությունների համար:

Ռազմական գործողությունների հետագա ընթացքում իսրայելամետ քարոզչությունը տեղի տվեց, որը նախեւառաջ կապված էր Ղազայում զոհված բազմաթիվ երեխաների եւ կանանց, ինչպես նաեւ անօգնական վիճակում հայտնված հազարավոր վիրավորների փաստի հետ, ինչը լայնորեն լուսաբանում էին արաբական հայտնի հեռուստաալիքները, մասնավորապես՝ «Ալ-Ջազիրան»:

Ի վերջո, ի՞նչ շահեցին եւ ի՞նչ կորցրին կողմերը պատերազմից: «Համասի» դիմակայությունը ծանր հետեւանքներ ունեցավ Ղազայի եւ նրա ժողովրդի համար, որը թանկ վճարեց դրա դիմաց: Պատերազմի ընթացքում զոհվեցին նվազագույնը 1300 պաղեստինցիներ, որոնցից 300-ից ավելին՝ երեխաներ, վիրավորների թիվն անցավ 5000-ից: Երկու տասնյակ հազար բնակելի շենքեր ավերվեցին եւ հազարավոր մարդիկ մնացին անօթեւան: Ղազայի ենթակառուցվածքները կաթվածահար եղան: Շատ ժամանակ կպահանջվի, որպեսզի շրջանը դուրս գա միջազ-

գային մեկուսացումից եւ հաղթահարի սոցիալ-տնտեսական ճգնաժամը:

Ինչ վերաբերում է «Համասին», ապա պատերազմից այն, թերեւս, ավելի շահեց, քան՝ տուժեց: «Համասը» կարողացավ հիմնականում պահպանել իր ղեկավարությունը, զինված ջոկատները (չնայած շարժումը կորցրեց Ալ-Կասսամի բրիգադի բազմաթիվ զինյալների) եւ ամենագլխավորը՝ իշխանությունը Ղազայում: Ըստ առանձին հետազոտությունների, պատերազմից հետո «Համասի» վարկանիշը Պաղեստինում (այդ թվում՝ արաբական աշխարհում) կաճի: Հատկանշական է, որ միջազգային հանրության կողմից լեգիտիմություն ունեցող ՊԻ նախագահ Մահմուդ Աբասը պատերազմի ավարտից հետո «Համասին» առաջարկեց ստեղծել կոալիցիոն կառավարություն: Ի դեպ, Աբասը նույնպես որոշ ձեռքբերումներ ունեցավ պատերազմից՝ մեկ տարով երկարացնելով իր նախագահության ժամկետը, այնպես, որպեսզի 2009-ին ՊԻ-ում միաժամանակ տեղի ունենան թե՛ պառլամենտական, թե՛ նախագահական ընտրություններ:

Իսրայելին հաջողվեց միայն որոշակիորեն թուլացնել «Համասի» դիրքերը, ոչնչացվեցին մեծ քանակությամբ թունելներ, որոնցով Եգիպտոսից Ղազա էր տեղափոխվում նաեւ զինամթերք: Իսրայելը տակտիկական առավելությունների հասավ «Համասի» նկատմամբ, եւ ավելի հավանական է, որ զինադադարը երկար տեւի, ինչպես դա ընդհանուր առմամբ եղավ «Հիզբալլահի» պարագայում: Իսրայելն ունեցավ ընդամենը 13 զոհ, որից 3-ը՝ քաղաքացիական անձինք:

Մի բան, սակայն, հստակ է. անգամ եթե «Համասը» հեռացվեր քաղաքական դաշտից, Իսրայելի նկատմամբ պաղեստինյան հասարակական գիտակցության մեջ դրական իմաստով որեւէ փոփոխություն տեղի չէր ունենալու գոնե տեսանելի ապագայում, քանի դեռ պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման ուղղությամբ խորքային քայլեր չեն ձեռնարկվել: Իսկ դա նշանակում է, որ Իսրայելը չի կարող ոչնչացնել «ահաբեկչության ենթակառուցվածքները», որոնք կարող են վերարտադրվել՝ որպես հակազդեցություն օկուպացիային, հետեւաբար, Իսրայելը չի կարող ստեղծել կայուն անվտանգություն իր երկրի համար, քանի որ շարունակելու է ապրել պաղեստինցիների հետ կողք կողքի: Այդ իսկ պատճառով որոշակիորեն վիճարկելի են թվում Իսրայելից եւ Արեւմուտքից եկող այն պնդումները, թե խաղաղության հնարավոր է հասնել միայն այն դեպքում, եթե «Համասը» զրկվի զենքի աղբյուրից («Համասը» արդեն իսկ հայտարարել է, որ շարունակելու է զինվել):

Պաղեստինա-իսրայելական հակամարտության թեժացման հերթական փուլն, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի Ղազայում Իսրայելի նկատմամբ հասարակական գիտակցության էլ ավելի արմատակա-

նացմանը, ինչի համար հատուկ քարոզչություն անհրաժեշտ չէ: Ղազան նման է բացօթյա բանտի, որի հասարակության մեջ մեկընդմիջտ տիրապետող են հակահերեական տրամադրությունները, իսկ Իսրայելի եւ նրա քաղաքացիների դեմ ուղղված ամեն տեսակի ռազմական (այդ թվում՝ շահիդական) գործողությունները դիտարկվում են որպես Իսրայելի եւ միջազգային հանրության վրա ճնշում գործադրելու միջոցներ: Ղազայում ծնվող ամեն երեխա նման տրամադրությունների հավանական կրող է:

Այս պարագայում հավանական է, որ Իսրայելը որոշակիորեն կփոխի կոշտ դիրքորոշումը՝ ստիպված լինելով վաղ թե ուշ բանակցել «Համասի» հետ եւ վերացնել Ղազայի շրջափակումը:

Ինչեւէ, քանի դեռ պաղեստինյան հարցը չի ստացել արմատական լուծում, ինչը նկատի է առնում անկախ պաղեստինյան պետության ստեղծում (որը բարդ ու երկարատեւ գործընթաց է), կողմերի միջեւ ձեռք բերված փխրուն զինադադարը չի կարող նպաստել իրական եւ կայուն խաղաղության հաստատմանը:

Իսկ Ղազայի պատերազմը վերստին ի հայտ բերեց այն իրողությունը, որ 21-րդ դարում ուժային ճանապարհով խնդիրներ լուծելն այդքան էլ հեշտ չէ:

<sup>1</sup> ՄԱԿ հիշյալ բանաձեւով Երուսաղեմը, Բեթղեհեմը եւ նրանց հարակից տարածքներն առանձնացվեցին որպես միջազգային գոտի ու ենթակա չէին հրեական եւ արաբական իշխանություններին:

<sup>2</sup> 1948թ. արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ (որին արաբական երկրներից մասնակցում էին Անդրհորդանանը, Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը եւ Իրաքը) ամենամեծ կորուստ կրեց Պաղեստինը, քանի որ Իսրայելը գրավեց Պաղեստինի տարածքի 74%-ը: Արեւելյան Պաղեստինը եւ Երուսաղեմի մյուս մասը՝ Հին քաղաքը, գրավեց եւ իրեն միացրեց Անդրհորդանանը, իսկ Եգիպտոսին անցավ Ղազայի շրջանը՝ 378. քառ. կմ:

<sup>3</sup> 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ Իսրայելը գրավեց Ղազայի շրջանը, Արեւելյան Երուսաղեմը, Բեթղեհեմը, պաղեստինյան այն բոլոր տարածքները, որոնք 1948թ. պատերազմից հետո միացվել էին Անդրհորդանանին եւ հայտնի էին որպես Արեւմտյան ափ: Իսրայելն իր վերահսկողությունը հաստատեց այն բոլոր տարածքներում, որոնք ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 1947թ. բանաձեւով հատկացվել էին արաբներին՝ Պաղեստին պետություն հիմնելու համար:

4 1994թ. Ղազայուն եւ Արեւմտյան արհմիութեան ստեղծվեց Պաղեստինյան ինքնավարություն (ՊԻ) 1993թ. Օսլո-ի համաձայնագրի հիման վրա: 2005-ին Իսրայելը միակողմանիորեն դուրս եկավ Ղազայից եւ այն հանձնեց պաղեստինցիների կառավարմանը՝ շարունակելով պահպանել վերահսկողությունը օդային եւ ջրային տարածքներում, սահմանային անցուղիներում (բացառապես Ռաֆահից): Սակայն 2006թ. պառլամենտական ընտրություններում «Համասի» հաղթանակից հետո Իսրայելը ձեռնամուխ եղավ ՊԻ նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը, իսկ 2007-ի հունիսից՝ Ղազայի ամբողջական շրջափակմանը՝ Իսրայելի անվտանգությունը «Համասի» կողմից իրականացվող հրթիռակոծումից ապահովելու պատրվակով:

5 2006թ. հունվարին «Համասը» հաղթանակ տարավ ՊԻ պառլամենտական ընտրություններում եւ ձեւավորեց կառավարություն՝ Իսմայիլ Հանիայի գլխավորությամբ: 2007-ի սկզբին սկսվեցին ներպաղեստինյան հակասությունները, որոնք վերաճեցին «Համասի» եւ «Ֆաթիհ» միջեւ բախումների: 2007թ. փետրվարին կնքված «Մեքքայի» համաձայնագրով կողմերը համաձայնության եկան դադարեցնել բախումները եւ համագործակցել: Սակայն հետագա զարգացումների եւ Իսրայելի հետ առճակատման արդյունքում «Համասը» Ղազայից դուրս մղեց «Ֆաթիհին», որին պատկանում էր ՊԻ ղեկավարումը: Ի պատասխան, Արեւմտյան արհմիութեան ՊԻ նախագահ Մահմուդ Աբասը լուծարեց «Համասի» կառավարությունը: 2008թ. ընթացքում երկու կազմակերպություններին հաշտեցնելու արաբական որոշ միջնորդություններ հաջողություն չունեցան:

## «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ – 2025»

### *Սուրեն Մանուկյան*

2008թ. նոյեմբերին ԱՄՆ Ազգային հետախուզության խորհուրդը (ԱՀԽ) ներկայացրեց «Համաշխարհային միտումներ–2025. փոփոխված աշխարհ» (Global Trends 2025: A Transformed World) զեկույցը: Դրա մեկուկես տարի տեւած պատրաստման աշխատանքներին մասնակցել են հարյուրավոր մասնագետներ ամբողջ աշխարհից, այդ թվում՝ Լոնդոնի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտից, Խաղաղության ուսումնասիրման Ստոկհոլմի միջազգային ինստիտուտից, Պեկինի ժամանակակից միջազգային հարաբերությունների ինստիտուտից, ինչպես նաև Բրուքինգսի ինստիտուտից, Ձեռներեցության ամերիկյան ինստիտուտից եւ ՌԵՆԴ կորպորացիայից:

ԱՀԽ նախագահ եւ զեկույցի համակարգող Թոմաս Ֆինգարը համարում է, որ զեկույցը չի կարելի դիտարկել իբրև կանխագուշակում: Նույնիսկ կանխատեսում տերմինը, նրա կարծիքով, այդքան էլ կոռեկտ չէ: Ավելի շուտ՝ դա ժամանակակից աշխարհի այն զարգացումների վերլուծությունն է, որոնք հաջորդ երկու տասնամյակում կարող են վճռորոշ դառնալ:

Ըստ Թոմաս Ֆինգարի, զեկույցի նպատակն է տալ նոր ղեկավարներին ավելի հստակ պատկերացում այն մասին, թե ինչպես կարող են զարգանալ իրադարձություններն աշխարհում եւ ինչպիսի միտումներ են գործելու մոտ ապագայում: Այս դեպքում նրանք ավելի պատրաստ կլինեն բացասական զարգացումներին հակազդելու համար:

Ելույթ ունենալով Ատլանտյան խորհրդում՝ Ֆինգարը նշեց. «Եթե դուք գիտեք՝ որն է խնդիրը, դուք կարող եք այն լուծել»:

Ձեկույցին, իհարկե, պետք է մոտենալ որոշակի վերապահությամբ: Օրինակ, 2004թ. հրատարակված մանորինակ զեկույցը բացարձակապես անտեսել էր համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Հետաքրքիր է, որ նոր զեկույցում այն նույնպես հաշվի չի առնվում:

### **Ժողովրդագրական անհամաչափություն**

Ամենալուրջ տեղաշարժերի շարքում զեկույցը նշում է ժողովրդագրական փոփոխությունները: Երկրագնդի բնակչության թիվը 2025թ. կհասնի 8 մլրդ-ի՝ այսօրվա 6,8 մլրդ-ի դիմաց: Ամենամեծ աճը կարձանագրի Հնդկաստանը՝ մոտ քառորդ մլրդ, գրեթե հավասարվելով Չինաստանին,

որի բնակչությունը կավելանա 100 մլն-ով, 350 մլն աճ կարձանագրի Աֆրիկան՝ Սահարայից հարավ, 100 մլն՝ Լատինական Ամերիկան, Պակիստանը և Նիգերիան՝ 55 մլն, Եթովպիան ու Կոնգոն՝ 40 մլն:

Հակառակ դրան՝ արագացված տեմպերով կրճատվելու է բնակչությունը Եվրոպայում, հատկապես Արևելյան Եվրոպայում: Ռուսաստանի բնակչությունը կնվազի 10 մլն-ով եւ կկազմի 130 մլն: Ընդ որում, մահմեդական բնակչության բաժինն այս երկրում հասնելու է 19%-ի, ինչն անխուսափելիորեն կբերի սլավոնական բնակչության շրջանում ազգայնակամության վերելքի: ԱՄՆ-ը եւ Կանադան թեեւ ավելացնում են բնակչությունը (40 եւ 4,5 մլն-ով), սակայն դա տեղի կունենա ներգաղթի հետեւանքով:

### **Պայքար ռեսուրսների համար**

Ձեկույցի հետաքրքիր նորություններից կարելի է համարել այն կենտրոնական դերը, որ հատկացվում է կլիմայական փոփոխություններին եւ ռեսուրսների համար մրցակցությանը: Նախկինում դրանք դառնում էին ամերիկյան ռազմավարական հետազոտությունների ընդամենը ածանցյալ մասեր:

Ժողովրդագրական ճնշման եւ տնտեսական աճի կարելորագույն հետեւանքներից է դառնալու գնալով ավելացող հումքային, էներգետիկ եւ պարենային պաշարների սղությունը:

Ավելացած բնակչությանն ապահովելու համար անհրաժեշտ է կիսով չափ ավելացնել պարենի այսօրվա չափը: Սակայն այս խնդիրը բախվում է հողատարածքների եւ ջրի պակասի հետ: Օրինակ, հացահատիկ արտադրողների թիվն արդեն այսօր խիստ սահմանափակ է՝ ԱՄՆ, Կանադա, Արգենտինա եւ Ավստրալիա, իսկ եթե այս երկրների կառավարությունները որոշեն հողերի մի մասը հատկացնել կենսավառելիքի հումքի արտադրությանը, ապա սովի խնդիրն ավելի կարդիականանա:

Բացի այդ, 2025թ. 36 երկրներում ապրող 1,4 մլրդ մարդ ունենալու են ջրամատակարարման խնդիրներ, եւ խմելու ջուրն ապագա հակամարտությունների ամենահիմնական աղբյուրներից կդառնա: Օրինակ, Չինաստանի, Պակիստանի, Բանգլադեշի եւ Հնդկաստանի գլխավոր գետերը սնուցող Հիմալայան շրջանը նման լարվածության ամենահավանական վայրն է: Նույնը կարելի է ասել Պաղեստինի մասին, որի տարածքով են անցնում Իսրայելի ջրային պաշարները: Կլիմայական փոփոխությունները դժվար թե միջպետական պատերազմի բերեն, սակայն կարող են դառնալ ավելի ու ավելի սրվող փոխադարձ միջպետական մեղադրանքների եւ հնարավոր է՝ ցածր ինտենսիվության զինված բախումների աղբյուր:

Ռեսուրսային սղությունը տարածվելու է նաև էներգակիրների վրա: Փորձագետները կանխատեսում են, որ 2025թ. հայտնաբերվելու է այլընտրանքային էներգիայի աղբյուր, հավանաբար ջրածնի հիմքի վրա, սակայն նրա կիրառումը չափազանց դանդաղ կլինի՝ նոր ենթակառուցվածքի ստեղծման եւ հնի փոխարինման համար ամհրաժեշտ հսկայական ծախսերի պատճառով:

Ատոմային էներգետիկան թեև զգալի աճ կարծանագրի, սակայն ի վիճակի չի լինի լրացնել աճող պահանջարկը: Իսկ ածխի պաշարները թեև կենտրոնացված են հենց ամենագլխավոր էներգասպառող երկրներում (67%-ը՝ ԱՄՆ-ում, Յնդկաստանում, Չինաստանում եւ Ռուսաստանում), սակայն մարդկությունը դեռ չի ստեղծել քարածխի այրման էկոլոգիապես ընդունելի մեթոդներ: Այսպիսով, հիմնական հույսը դեռ մնում են ածխաջրածինները, որոնց արդյունահանումը, սակայն, աճելու է ավելի դանդաղ, քան նրանց սպառումը՝ Չինաստանի, Յնդկաստանի եւ Բրազիլիայի տնտեսությունների շարունակական աճի պարագայում: Միայն վեց պետություններում է նկատվում ածխաջրածինների արդյունահանման ավելացում՝ Սաուդյան Արաբիա, Քուվեյթ, ԱՄԷ, Իրաք եւ Ռուսաստան: Նրանց կավելանա նաև Բրազիլիան, որը սկսում է նավթի արդյունահանում Սանտոս ծոցում: Գազի պաշարների 57%-ը պատկանում է Ռուսաստանին, Իրանին եւ Կատարին, որոնք էլ գերիշխելու են այս շուկայում: Այսպիսով, ըստ զեկույցի հեղինակների, նավթի եւ գազի արտադրությունը կենտրոնացված է լինելու անկայուն շրջաններում:

Ռեսուրսային սղությունը բերելու է էներգետիկ եւ այլ բնական պաշարների նկատմամբ վերահսկողության համար պայքարի: Շատ երկրներ կսկսեն պատերազմել՝ վառելիքի, ջրի եւ պարենի երաշխավորված մատակարարումն ապահովելու համար: Օրինակ, Յնդկաստանը եւ Չինաստանը բախվելու են հումքային պաշարների եւ անվտանգ օվկիանոսային ուղիների ապահովման համար: Նույն միտումները կլինեն Աֆրիկայում (հատկապես Սահարայի շրջանում), Պարսից ծոցում եւ Կենտրոնական Ասիայում, որտեղ կբախվեն Մոսկվայի եւ Պեկինի շահերը: Նույնիսկ ոչ ռազմական գործողությունները կունենան կարելու աշխարհաքաղաքական նշանակություն: Օրինակ, էներգիայի պակաս ունեցող պետությունները կարող են զենք եւ ճշգրիտ տեխնոլոգիաներ փոխանցել եւ քաղաքական ու ռազմական միություն հաստատել այն երկրների հետ, որոնք վառելիքի պաշարներ ունեն:

Հետաքրքիր են այս պարագայում նաև զլոբալ տաքացման հետեւանքով բացվող հնարավորությունները: Ածխաջրածինների արտահանումն Արեւելյան Սիբիրում եւ Արկտիկայի ծովահատակում կհեշտացվի: Իսկ դա

շատ կարելու է Ռուսաստանի համար, որի արտահանման 80%-ը եւ բյուջեի եկամուտների 32%-ը ապահովում է հենց նավթի եւ գազի արտահանումը: Հյուսիսային օվկիանոսի «ազատագրումը սառույցից» հսկայական հնարավորություններ է բացում: Այն ոչ միայն կհեշտացնի մուտքը դեպի օվկիանոսի հանքային ռեսուրսներ, այլ նաեւ նոր՝ անհամեմատ կարճ ծովային ճանապարհներ կստեղծի: Սակայն հավակնորդներն այս տարածքի համար նույնպես շատ են՝ ԱՄՆ, Կանադա, Դանիա, Նորվեգիա եւ Ռուսաստան:

### **Բազմաբեւեռություն՝ ԱՄՆ գերիշխանությամբ**

Հետաքրքիր տեղաշարժեր է կանխագուշակում գեկույցը նաեւ աշխարհակարգի փոփոխության տեսակետից:

ԱՄՆ-ը թեւէ մնալու է ամենակարելու դերակատարը եւ պահպանելու է ամենահզոր զինված ուժերը, սակայն նրա հզորությունը տնտեսական եւ նույնիսկ ռազմական ոլորտում փոքրանալու է, եւ ազդեցության ամերիկյան լծակներն ավելի սահմանափակ են լինելու:

Հետագա տարիներին Վաշինգտոնն այլեւս չի կարողանալու թելադրել աշխարհին զարգացման մոդել: Ճիշտ է, դա չի կարողանալու անել նաեւ ցանկացած այլ երկիր:

Նոր բազմաբեւեռ աշխարհում ԱՄՆ-ը ստիպված կլինի ընտրություն կատարել ներքին եւ արտաքին քաղաքական առաջնությունների միջեւ: Ինչպէս հայտարարեց Ֆինգարը, ԱՄՆ քաղաքականության նկատմամբ դժգոհությունն աշխարհում այնքան մեծ է, որ միջազգային օրակարգի ցանկացած ամերիկյան գաղափար վարկաբեկված է ի սկզբանէ:

Վերոնշյալ գործընթացները բարդանում են նաեւ նրանով, որ ԱՄՆ դուլարը կորցնելու է «համաշխարհային ռեզերվային արժույթի կարգավիճակը եւ դառնալու է շուկայական արժույթային զանբյուղում առաջինը հավասարների մեջ»:

Համաշխարհային թատերաբեմում առաջանում են մրցակցող ուժային կենտրոններ: Ի հայտ են գալիս միջազգային մակարդակի նոր խաղացողներ, որոնք նույնիսկ խաղի նոր կանոններ են բերում՝ Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան եւ Չինաստան:

Ծնվում է 18-րդ դարի աշխարհակարգը հիշեցնող մի միջավայր՝ բազմաթիվ ուժեղ խաղացողներ, որոնք ներգրավված են սպառազինությունների մրցավազքում եւ տարածքային էքսպանսիայում: Վերը նշված պետություններից բացի, ընդգծվում է նաեւ Ինդոնեզիայի, Իրանի եւ Թուրքիայի դերի բարձրացումը:

Չինաստանը հաջորդ 20 տարիների ընթացքում աշխարհի վրա ավելի մեծ ազդեցություն է ունենալու, քան ցանկացած այլ երկիր: Ներկայիս զարգացման միտումների պահպանման պարագայում, այն 2025թ. կդառնա աշխարհի երկրորդ տնտեսությունը: ՉԺՅ-ն կլինի առաջատար ռազմական տերություն, ամենահզոր ռազմածովային ուժերով: Միաժամանակ այն կունենա պատերազմ վարելու բարձր տեխնոլոգիական եւ ասիմետրիկ միջոցներ:

Ավելին, այն շատերի համար օրինակ կդառնա: Ավելի շատ երկրներ որդեգրելու են պետական կապիտալիզմի չինական մոդելը, ինչն արդեն անում է Ռուսաստանը:

Այս պարագայում, Չինաստանի համար ամենահիմնական խնդիրներից կարող է լինել բաց տնտեսության եւ փակ կոմունիստական մենաշնորհի միջեւ զուգակշռի պահպանումը:

Սակայն Չինաստանը նաեւ բախվելու է մի շարք լուրջ խնդիրների հետ: Այն կսկսի արագորեն ծերանալ, 2015-ից նրա աշխատունակ բնակչության մասնաբաժինը անկում է ապրելու: Սա լինելու է «Մեկ ընտանիք՝ մեկ երեխա» քաղաքականության հետեւանքը: Սրա պտուղներից է նաեւ երկրում տղաների չափազանց մեծ թվային գերազանցությունն աղջիկների նկատմամբ: Սրան գումարվելու են ջրի, սննդի եւ էներգիայի մատակարարման հետ կապված խնդիրներ:

Յնդկաստանը նույնպես արագորեն զարգացնելու է իր տնտեսությունը եւ ձգտելու է ստեղծել բազմաբեւեռ աշխարհ, որի բեւեռներից մեկը կլինի Դելին: Սակայն շուտով այն բախվելու է ոչ միայն ռեսուրսային սահմանափակումների, այլ նաեւ աճող հակասությունների հարավի զարգացած կենտրոնների (Մումբայ, Գայդարաբադ, Մադրաս) եւ երկրի հյուսիսային հետամնաց շրջանների միջեւ:

Ռուսաստանին բավական մեծ տեղ է հատկացված: Այն կարող է զարգանալ ցանկացած ուղղությամբ. դառնալ ավելի հարուստ, ուժեղ եւ ինքնավստահ (եթե ներդրումներ կատարի մարդկային կապիտալի մեջ, ընդլայնի եւ դիվերսիֆիկացնի տնտեսությունը եւ ինտեգրվի համաշխարհային շուկաներին) կամ քառսի մեջ հայտնվել, հատկապես եթե նավթի ու գազի գները լինեն բարելի համար 50-70 դոլարի միջակայքում: ՌԴ ապագայի կանխատեսումը վերջացնելով՝ նշվում է, որ ինչ-որ կոնկրետ բան ասել այս երկրի մասին հնարավոր չէ, քանի որ պայքար է գնում տնտեսությունում լիբերալ եւ քաղաքականությունում ոչ լիբերալ միտումների միջեւ:

Եվրամիության ապագան շատ անմխիթար է: Ավարտվելու է համընդհանուր սոցիալական պետության դարաշրջանը: Բնակչության ծերացման

պատճառով եվրոպացիները ստիպված կլինեն հրաժարվել սոցիալական շատ ծրագրերից, իսկ սա ԵՄ հիմքն է: Ջուզահեռ տեղի ունեցող ներգաղթողների հոսքն իր հետ բերելու է ազգայնականության աճ: Սրա հետեւանքով եվրոպական պետությունները կկենտրոնանան ավելի շատ տեղական խնդիրների, քան ԵՄ ճակատագրի վրա: ԵՄ-ն ընդլայնվելու է Բալկանյան պետությունների եւ հնարավոր է՝ Թուրքիայի եւ Ուկրաինայի հաշվին: Կախվածությունը ռուսական գազից կպահպանվի Գերմանիայի եւ Իտալիայի պատճառով, որոնք Մոսկվան համարում են ապահով մատակարար: Եթե էթնիկ փոքրամասնությունների մասնաբաժինը եվրոպական պետություններում հասնի 15% կամ ավելիի, դա հասարակությունում լարվածության ուժեղացման կբերի: Եթե ԵՄ-ին հաջողվի ինտեգրել մուսուլմանական ներգաղթողներին սեփական հասարակությունում, ապա աշխատանքային ռեսուրսների հարցը լուծվելու է, եթե ոչ՝ նրան սպասում է երկարատեւ անկում:

### **Պետական կապիտալիզմի հաղթանակը արեւմտյան լիբերալիզմի նկատմամբ**

Այս փոփոխություններն իրենց հետ բերում են նաեւ գաղափարական ուղենիշների վերաթեւորում:

Տեղի է ունենալու «ժամանակակից պատմության համար աննախադեպ» հարստության եւ տնտեսական հզորության տեղափոխում Արեւմուտքից Արեւելք: Դրան նպաստում է նավթի գների աճը, ինչպես նաեւ արտադրության տեղափոխումը դեպի Չինաստան եւ այլ ասիական պետություններ (էժան աշխատուժի պատճառով):

Այնպիսի խոշոր տերություններ, ինչպիսիք են Չինաստանը, Ռուսաստանը եւ Հնդկաստանը, չեն ցանկանում հետեւել արեւմտյան լիբերալ-դեմոկրատիայի մոդելին, որն իր տեղը գիջում է պետական կապիտալիզմին:

Արեւմտյան լիբերալիզմը շատ պարզ ցուցադրել է իր անընդունակությունը եւ հեղինակագրկվել: Եվ շատ երկրներ ձգտելու են կրկնել Ռուսաստանում եւ Չինաստանում իրականացվող քաղաքական եւ տնտեսական զարգացման այլընտրանքային մոդելները, քանի որ նրանք, ովքեր Արեւմուտքի մաս չեն, հասկացել են ամերիկյան կամ եվրոպական ճանապարհի կրկնության անհնարիությունը: Իսկ չինական մոդելը նշանակում է ավտորիտարիզմ, պետական կապիտալիզմ, ուժեղ տնտեսական պլանավորում: Այս պետություններում ձեւավորվում են հսկայական պետական ֆոնդեր, որոնց ներդրումները զարգացող շուկաներ ավելի մեծ

են, քան Համաշխարհային բանկինը կամ Արժույթի միջազգային հիմնադրամինը:

Պետական կապիտալիզմն արդեն իսկ որդեգրել են Սինգապուրը, Հարավային Կորեան եւ Թայվանը: Ոչ արեւմտյան աշխարհի մարդկանց մեծամասնության համար «ժողովրդավարություն» բառը կայուն կերպով նույնացվում է աղքատության եւ կոռուպցիայի հետ: Իսկ Արեւելյան Ասիայում մարդկանց ավելի շատ հետաքրքրում են պետական կառավարման որակը եւ կյանքի բարձր կենսամակարդակը, քան քաղաքացիական եւ քաղաքական ազատությունները: Նույնիսկ «հին», արեւմտյան ժողովրդավարություններում քաղաքացիներն արդեն հոգնում են իշխանությունների վատ աշխատանքից ու վերնախավային հակասություններից եւ կառավարություններից պահանջում են կոշտ գործողություններ անցումային դարաշրջանի բազմաթիվ վտանգների դեմ:

### **Հակամարտությունների կիզակետ**

2025թ. հարուստ է լինելու անհանդուրժողականությամբ եւ հակամարտություններով, ինչպես դասային, այնպես էլ միջէթնիկ եւ միջկրոնական: Ինտերնետի եւ մուլտիմեդիայի զարգացումը իր հետ կրերի արխայիկ, ավելի փոքր եւ փակ՝ ցեղային եւ կլանային հասարակությունների վերածնունդ:

Բացի այդ, մեզ սպասում են նաեւ հակասություններ հասարակությունների ներսում: Քանի որ կլիմայի փոփոխությունը եւ ջրի պակասը շատ գյուղական շրջաններ կյանքի համար ոչ պիտանի կդարձնեն, հատկապես Հյուսիսային Աֆրիկայում, Մերձավոր Արեւելքում եւ Ասիայում, հարյուր միլիոնավոր երիտասարդ գործազուրկներ կուղղվեն զարգացող պետությունների մեզապոլիսներ եւ հանդիպելով տեղացիների թշնամական վերաբերմունքին (հաճախ այլ կրոնի կամ էթնիկական պատկանելության պատճառով), կհամալրեն հանցավոր խմբերը եւ ռազմականացված գաղափարական շարժումները: Քաղաքական եւ սոցիալական բախումները վերաճելու են բռնության բազմաթիվ դեպքերի: Իսլամը շարունակելու է առաջխաղացումը՝ ճնշելով քրիստոնեությանը: Այն «բազմազանությունը», որն այսօր Արեւմուտքի հրճվանքի առարկա է, իր հետ կրերի ազգայնականների, կրոնական «զելոտների» եւ նոր մարքսիստների կողմից առաջադրված մի շարք մարտահրավերներ: Եթե համաշխարհային տնտեսությունն անկում ապրեց, ապա անխուսափելի են դառնում ապստամբական շարժումները Չինաստանում, Հնդկաստանում, Բրազիլիայում եւ Աֆրիկայի ու Ասիայի հսկայական տարածքներում:

Ռիսկի գործոն են դառնում մեծ քրիստոնեական համայնքներով իսլամական երկրները՝ Եգիպտոս, Սուդան եւ Ինդոնեզիա, ինչպես նաեւ քրիստոնեական երկրները հոծ մուսուլմանական բնակչությամբ՝ Ֆիլիպիններ, Ուզանդա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն:

Հետաքրքիր կանխատեսումներ է պարունակում զեկույցը նաեւ պետության դերի եւ միջազգային կազմակերպությունների ապագայի մասին: Առաջանալու են նոր «չկայացած» պետություններ, որտեղ տիրում են անիշխանությունը եւ անօրինականությունը՝ Սոմալիի մասն: Որոշ տեղերում իշխանությունը պետությունից անցնում է «ոչ պետական դերակատարներին»՝ կորպորացիաներին, ցեղերին, կրոնական խմբերին եւ քրեական խմբերին: Վերլուծաբանները նույնիսկ կանխատեսում են, որ կազմակերպված հանցավորությունը կարող է վերահսկողություն հաստատել Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի երկրներից մեկի վրա:

Աֆրիկայի եւ Հարավային Ասիայի առանձին շրջաններում պետական իշխանությունը մեզ հայտնի տեսքով կարող է վերանալ, քանի որ հնարավորություն չի ունենա ապահովել հասարակության հիմնական պահանջները, այդ թվում նաեւ անվտանգությունը: Պետությունները պառակտվելու են ռեսուրսների սղության պատճառով, իսկ ՄԱԿ-ը եւ այլ միջազգային կազմակերպություններ ընդունակ չեն լինելու լուծել առաջացած խնդիրները:

Հակամարտություններով հարուստ կմնան նաեւ այսօրվա թեժ գոտիները: Իրանն անխուսափելիորեն ստեղծելու է միջուկային զենք: Դա բերելու է սպառազինությունների մրցավազքի, երբ մերձավորարեւելյան մյուս պետությունների մոտ նույնպես կառաջանան միջուկային ամբիցիաներ:

Դա կարող է բերել «միջուկային հովանու տակ ահաբեկչության եւ պարտիզանական գործողությունների» առաջացման, ինչը մեծացնելու է սուր ռազմական հակամարտությունների հավանականությունը:

Հակառակ սրան՝ Կորեական թերակղզում հնարավոր է երկու Կորեաների միավորումը եւ թերակղզու ապառազմականացումը, այդ թվում նաեւ միջուկային:

Անդրադարձ կա նաեւ ահաբեկչության ապագային: Թեեւ Ալ-Կաիդան կդադարեցնի գործունեությունը, սակայն նրա հետնորդները կշարունակեն գործել տեղական մակարդակում:

**Ռոբերտ Կեյզան. «ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՊԱՅՊԱՆՎԻ  
ՄԵԿ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻ ՔԱՆԻ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ»**

*Ռոբերտ Կեյզան - ամերիկացի ճանաչված քաղաքագետ եւ հրապարակախոս, Քարնեգի հիմնադրամի ավագ աշխատակից, «Պատմության վերադարձն ու երազանքների վերջը» գրքի հեղինակ: Հոդվածը հրապարակվել է Foreign Affairs հանդեսում (թիվ 5, 2008թ.):*

Մեր եսակենտրոն աշխարհում յուրաքանչյուր պետություն եւ ժողովուրդ միշտ իրեն հարց է տալիս. «Այս ամենից մեզ ի՞նչ օգուտ»: «Ահաբեկչության դեմ պատերազմի» հայեցակարգի անհամարժեքությունը բխում է այն իրողությունից, որ աշխարհում ամենեւին էլ ոչ շատ պետություններ են բաժանում Միացյալ Նահանգների այն կարծիքը, թե ահաբեկչությունը ժամանակի գլխավոր մարտահրավերն է: Ամերիկայի պայքարը մյուս երկրների կողմից չգնահատվեց որպես «ընդհանուր բարիք», որի համար իրենք պետք է նրան շնորհակալություն հայտնեն: Ընդհակառակը, երկրների մեծամասնությունը կարծում է, որ իրենք են ԱՄՆ-ին շնորհ անում՝ իրենց զորքերն ուղարկելով Աֆղանստան կամ Իրաք, քանզի հաճախ նրանց թվում է, թե դրանով իրենք զոհում են սեփական շահերը:

Անշուշտ, բոլոր արտաքին քաղաքական հայեցակարգերն, այսպես թե այնպես, անկատար են: Կոմունիստական վարչակարգերի զսպման հայեցակարգերը եւս իդեալական չէին, որովհետեւ 1947–1989թթ. ժամանակահատվածում, կոմունիզմի եւ ժողովրդավարական կապիտալիզմի միջեւ պայքարից բացի, տեղի ունեցան շատ այլ կարեւոր իրադարձություններ: Եվ, այնուամենայնիվ, մյուս պետությունները հակակոմունիզմի հողի վրա համախմբվեցին Միացյալ Նահանգների շուրջը՝ համաձայնվելով նրա առաջատարության հետ: Այն անհամեմատ ավելի կարեւոր էր, քան ԱՄՆ իմիջը, որը բնավ ոչ միշտ է եղել անբասիր: Եթե Վիետնամի պատերազմը դաշնակիցների ճամբարում չհանգեցրեց նման պառակտման, ինչպես Իրաքի պատերազմը, ապա դա բոլորովին էլ այն պատճառով չէր, որ Լինդոն Ջոնսոնի եւ Ռիչարդ Նիքսոնի Ամերիկան ավելի մեծ հարգանք էր վայելում, քան Ջորջ Բուշի Ամերիկան: Բանն այն է, որ այդ տարիներին Միացյալ Նահանգների գործողությունները համահունչ էին մյուս ժողո-

վուրդների հիմնական ակնկալիքներին ու ձգտումներին: Նախեւառաջ, ԱՄՆ-ը ապահովում էր շատ երկրների պաշտպանությունը Խորհրդային Միությունից, ուստի նրան ներեցին եւ Վիետնամի արկածախնդրությունը, եւ յուրօրինակ քաղաքական մշակույթը, երբ ընդամենը յոթ տարվա ընթացքում տեղի ունեցան Մարտին Լյութեր Քինգի ու Ռոբերտ Քենեդու սպանությունները, աֆրոամերիկացիների խռովությունն Ուոթսում, ջարդը Քենթի պետական համալսարանում, ինչպես նաեւ Ուոթերգեյթը:

Ահաբեկչության դեմ պատերազմն այդպես էլ չհամախմբեց համաշխարհային ընկերակցությանը: Չինաստանն ու Ռուսաստանը հաճույքով սատարեցին նրան, քանզի այն Միացյալ Նահանգներին թույլ չէր տալիս ուշադրությունը սեւեռել այս երկու երկրներում մարդու իրավունքների զանգվածային խախտումների վրա: Բացի այդ, ահաբեկչության դեմ պատերազմը նրանց շահավետ էր, քանզի Մոսկվայի համար այն ենթադրվում էր չեչենների, իսկ Պեկինի համար` ուլդուրների դեմ պատերազմը:

Եվրոպացիների համար իսլամական արմատականությունն, առաջին հերթին, ներքին խնդիր է: Նրանց ամենից շատ մտահոգում է, թե կկարողանան, արդյոք, մուսուլմաններն իրենց սովորույթներով եւ մշակույթով ներգրվել 21-րդ դարի եվրոպական հասարակությանը, ու եթե այո, ապա ինչ ձևով: Եվրոպացիները համարում են, որ Ամերիկան իր գործողություններով սոսկ կրակին յուղ է լցնում: Ամերիկացիների կողմից փորփրված կրետաբունը Եվրոպային չափազանց մոտ է, եւ դա չի կարող չանհանգստացնել եվրոպացիներին:

Մի խոսքով` ահաբեկչության դեմ պատերազմն ավելի շուտ խոչընդոտներ է ստեղծում եւ դառնում հակասությունների աղբյուր, քան ծառայում միավորման նպատակներին: Միացյալ Նահանգները, որն արդեն 1990-ական թվականներին շատերի կողմից ընդունվում էր որպես գերիշխան, ով մյուս երկրների նկատմամբ օգտագործում էր ահաբեկման մեթոդներ, սեպտեմբերի 11-ից հետո նաեւ սկսեց ընկալվել որպես մի գերիշխան, որը կլանված է սեփական խնդիրներով եւ չի խորհում իր գործողությունների հետեւանքների մասին:

### **Ուժ եւ պատրանք**

Արդի աշխարհում Միացյալ Նահանգների վիճակն այնքան վատ չէ, ինչպես ընդունված է համարել: Այն կանխատեսումները, թե մյուս տերությունները կհամախմբվեն եւ կհակազդեն չկայացած գերտերությանը, չիրականացան: Մի շարք պետությունների հզորացումը չի հանգեցնի

ԱՄՆ-ի դեմ միավորմանը: Չինաստանին ու Ռուսաստանին չի բավարարում Ամերիկայի համաշխարհային տիրապետության մասշտաբը, եւ նրանք շահագրգիռ են, որպեսզի իրենք առավել ազդեցություն ունենան համաշխարհային իրադարձությունների ընթացքի վրա: Ընդ որում, նրանք միմյանցից երկյուղում են ոչ պակաս, քան Վաշինգտոնից: Մյուս հզորացող տերությունները, մասնավորապես՝ Բրազիլիան եւ Չնդկաստանը, չեն ձգտում դիմակայել Միացյալ Նահանգների ազդեցությանը:

Իրականում, չնայած հասարակական կարծիքի հարցման բացասական արդյունքներին, համաշխարհային առաջատարների մեծ մասն աշխարհաքաղաքական պլանում մերժեցում է Միացյալ Նահանգների հետ: Սրանից մի քանի տարի առաջ, Ժակ Շիրակի եւ Գերհարդ Շրյոդերի ժամանակ, Ֆրանսիան ու Գերմանիան սիրաշահում էին Ռուսաստանին՝ փորձելով դրանով հավասարակշռել ԱՄՆ ազդեցությունն աշխարհում: Սակայն այժմ Ֆրանսիան, Գերմանիան ու Եվրոպայի մյուս երկրները հակվում են այլ որոշումների կայացման: Ոչ թե որպեսզի նրանք կրկին Միացյալ Նահանգների հանդեպ սիրով բռնկվեն: Պարզապես արտաքին քաղաքականությունում Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի առավել ամերիկամետ դիրքորոշումն արտահայտում է նրանց կարծիքը, թե Միացյալ Նահանգների հետ մերժեցումը, թեեւ ոչ բոլոր բնագավառներում, միայն մեծացնելու է Եվրոպայի հզորությունը եւ ազդեցությունը: Միեւնույն ժամանակ, Արեւելյան Եվրոպայի երկրներն անհանգստացած են Ռուսաստանի հզորության վերածննամբ: Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան ավազանի պետությունները Միացյալ Նահանգների հետ գնացին մերժեցման հիմնականում Չինաստանի աճող հզորության հետ կապված մտահոգությունների պատճառով: 1990-ական թվականների կեսին ԱՄՆ եւ ճապոնիայի դաշինքը «ճաք տվեց», բայց սկսած 1997 թվականից՝ ռազմավարական հարաբերություններն ամրապնդվեցին: Հարավարեւելյան Ասիայի որոշ պետություններ նույնպես սկսեցին հզորացող Չինաստանի կողմից հնարավոր ագրեսիայից ապահովագրվել: (Այս ընդհանուր միտումից կարելի է բացառություն համարել Ավստրալիան, քանզի նրա նոր կառավարությունն ավելի շատ ձգտում է դեպի Չինաստան եւ անհամեմատ ավելի քիչ՝ դեպի Միացյալ Նահանգներ):

Առավել նկատելի առաջընթաց տեղի ունեցավ Չնդկաստանի՝ Մոսկվայի նախկին դաշնակցի դիրքորոշման մեջ, որն այժմ ռազմավարական ու տնտեսական ավելի ընդարձակ նպատակների հասնելու համար ԱՄՆ-ի հետ լավ հարաբերությունները համարում է չափազանց կարելու:

Նույնիսկ Մերձավոր Արեւելքում, ուր հակաամերիկյան տրամադրություններն ավելի ուժեղ են, քան որեւէ այլ տեղ, իսկ Իրաքի օկուպացիայի եւ Արու-Գոբեյբ բանտի սարսափների մասին հիշողությունները շարունակում են բոցավառել ժողովրդական զանգվածներին, ուժերի ռազմավարական դասավորությունն ավելի շուտ Միացյալ Նահանգների օգտին է, քան դեմ: Եգիպտոսը, Յորդանանը, Մարոկկոն ու Սաուդյան Արաբիան շարունակում են սերտ համագործակցել Վաշինգտոնի հետ, հավասարապես նաեւ Պարսից ծոցի երկրները, որոնք մտահոգված են Իրանի ճարտասանությունից եւ գործողություններից: Բաղդադը Սադամի ժամանակների անհաշտ հակաամերիկյանիզմից անցել է ԱՄՆ-ից կախվածության, իսկ կայուն Իրաքը հաջորդ տարիներին ռազմավարական հավասարակշռությունը վճռականորեն տեղաշարժելու է Ամերիկայի կողմը, քանզի տիրում է նավթի վիթխարի պաշարների եւ կարող է տարածաշրջանում կարեւոր դեր խաղալ:

Այս իրավիճակը շահեկանորեն տարբերվում է սառը պատերազմի ժամանակներից, երբ Մերձավոր Արեւելքում Միացյալ Նահանգներին ուղեկցում էին խոշոր ռազմավարական անհաջողությունները: Անցյալ դարի 50-60-ական թվականներին արաբական աշխարհի ազգայնական շարժումը համակեց ողջ տարածաշրջանը եւ բացեց դռները Խորհրդային Միության աննախադեպ ազդեցության համար՝ ներառյալ ԽՍՀՄ-ի ու Գամալ Աբդել Նասերի կողմից ղեկավարվող Եգիպտոսի, ինչպես նաեւ ԽՍՀՄ-ի ու Սիրիայի միջեւ թվացյալ դաշինքը: 1979-ին իրանական հեղափոխության (այաթոլա Խոմեյնիի առաջնորդությամբ) արդյունքում ամերիկամետ տրամադրված շահի արտաքսմամբ փլուզվեց ԱՄՆ ազդեցության կարեւոր հենասյունը տարածաշրջանում: Այն ռազմավարական հավասարակշռության մեջ առաջ բերեց արմատական տեղաշարժ, որը մինչ այժմ արտահայտվում է Ամերիկայի վրա: Իրաքի պատերազմը նման հետեւանքների չհանգեցրեց:

Նրանք, ովքեր այսօր խոսում են Միացյալ Նահանգների մայրամուտի մասին, հաճախ են գտնվում պատրանքների գերության մեջ՝ երեւակայելով, թե իբր անցյալում ողջ աշխարհը պարել է ամերիկյան դուդուկի տակ: Շատերը կարոտախտով են համակված Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ընկած փառահեղ ժամանակաշրջանի հանդեպ, երբ ԱՄՆ-ը գերիշխում էր ողջ աշխարհում: Նրանք մոռանում են, որ այն ժամանակ, հասնելով մեծ հաջողությունների Եվրոպայում ու Ճապոնիայում, Միացյալ Նահանգներն անհաջողություններ կրեց աշխարհի մյուս մասերում: Այդ «փառահեղ» ժամանակաշրջանում նա Չինաստանը «հանձնեց»

կոմունիստներին, հանդուրժեց Յուսիսային Կորեայի ներխուժումը Չարավային Կորեա, թույլ տվեց Խորհրդային Միությանը փորձարկել ջրածնային ռումբը, չկանխեց հետգաղութային ազգայնականության բռնկումները Յնդկաչինում եւ այլն:

Այդ իրադարձություններից յուրաքանչյուրը վիթխարի մասշտաբի ռազմավարական աղետ էր եւ այն ժամանակ հենց այդպես էլ ընկալվում էր: Դրանք պատուհասներ էին, որոնք 20-րդ դարի երկրորդ կեսին յուրովի ազդեցին համաշխարհային պատմության ընթացքի վրա, ընդ որում՝ ոչ լավագույն կողմով, եւ այդ դեպքերից յուրաքանչյուրում ԱՄՆ-ը ի գորու չէր լինում դրանք վերցնել հսկողության տակ: Վերջին տասնամյակի իրադարձություններից ոչ մեկը համեմատելի չէ այն ժամանակների աշխարհաքաղաքական ձախողումների հետ, որոնք ամերիկյան դիրքերի թուլացման հետեւանք էին:

Չին ռազմավարները հավատում են, որ աշխարհում ուժերի ներկայիս դասավորությունը, թերեւս, մի որեւէ ժամանակ պահպանվի, եւ նրանք, հավանաբար, ճիշտ են: Այնքան ժամանակ, քանի դեռ Միացյալ Նահանգները համաշխարհային տնտեսության ղեկին է, գերիշխում է ռազմական ոլորտում եւ հանդիսանում է ամենահանրաճանաչ քաղաքական փիլիսոփայության գլխավոր առաքյալը, այնքան ժամանակ, քանի դեռ ամերիկյան հասարակությունը շարունակում է հանդես գալ Ամերիկայի գերիշխող դիրքի օգտին, ինչպիսին նա վեց տասնամյակ անփոփոխ մնացել է, վերջապես՝ այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ հավանական փոխաններն իրենց հարեւաններին ավելի շատ վախ են ներշնչում, քան համակրանք, ձեւավորված միջազգային համակարգը կանգուն կմնա: Աշխարհում նախկինի պես կպահպանվի մեկ գերտերություն՝ մի քանի մեծ տերությունների առկայությամբ:

Եվս մեկ պատրանքն այն է, որ Ամերիկյան կարող է իրեն վերադարձնել համաշխարհային առաջատարությունը եւ վերականգնել դաշնակիցների հետ այն համագործակցությունը, որը հատուկ էր սառը պատերազմի դարաշրջանին: Արեւմտյան դաշնակիցներին այլեւս չի միավորում այնպիսի սպառնալիքը, ինչպիսին Խորհրդային Միության գոյությունն էր, որը Միացյալ Նահանգներին եւ մյուս պետություններին ստիպում էր համախմբել շարքերը: Ներկայիս աշխարհն ավելի շատ հիշեցնում է 19-րդ հարյուրամյակը, քան 20-րդ դարի վերջը: Նրանք, ովքեր դա լավ նորություն են համարում, պետք է հիշեն, որ 19-րդ հարյուրամյակն այնպես բարեհաջող չավարտվեց, ինչպես սառը պատերազմի դարաշրջանը:

Մեր եսասիրական աշխարհում ոչ բոլոր երկրներն են կարող իրենց ողջամտությունն թույլատրել: Բայց եթե որեւէ հույս դեռ մնացել է, ապա դա առանձին պետությունների կողմից ընդհանուր արժեքների վերիմաստավորման հույսն է: ԱՄՆ-ը եւ մյուս ժողովրդավարական երկրները կիսում են ընդհանուր ձգտումը ազատական համաշխարհային կարգին՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների, միջազգային իրավունքի եւ համաձայնագրերի վրա, որքան էլ որ նրանք անկատար լինեն: Որոշ ավտորիտար պետությունների ազդեցության ու հզորության մեծացման, ինչպես նաեւ արմատական իսլամական ահաբեկչության հակաժողովրդավարական հարձակումների պատճառով՝ այդ կարգը հայտնվում է սպառնալիքի տակ: Որքան նվազ ակնհայտ է ժողովրդավարությունների կարիքը միմյանց նկատմամբ, ինչպես նախկինում էր, այնքան ավելի հաստատուն կերպով է առաջին պլան մղվում այդ երկրների (ներառյալ՝ Միացյալ Նահանգները)՝ «ապագայի վրա սեւեռվելու» անհրաժեշտությունը:

## ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### *Լեռկադիա Դրոբիժեա*

*Լեռկադիա Դրոբիժեա – Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի սոցիոլոգիայի ինստիտուտի ազգամիջյան հարաբերությունների հետազոտական կենտրոնի ղեկավար:*

#### **Ազգայնականության ընկալման բանալիները**

Ազգայնականությունը սահմանում են որպես գաղափարախոսություն, համաձայն որի, ազգի՝ որպես խմբի, շահերն ու արժեքները գերակայում են մյուս շահերից ու արժեքներից:

Գրականությունում եւ քաղաքական պրակտիկայում ընդունված է առանձնացնել քաղաքացիական կամ, ինչպես այն կոչել է հայտնի պատմաբան Ջանս Կոնը, արեւմտյան ազգայնականությունը՝ Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի մոդելով: Նրան անվանում են նաեւ ռացիոնալ՝ հիմնված պետության հանդեպ հավատարմության, անձի ազատ ինքնորոշման վրա: Յենց այս հարթության մեջ է ընկած ազգի ամերիկյան ընկալումը:

Երկրորդ տարբերակը էթնոմշակութային կամ էթնիկ ազգայնականությունն է: Այն համարում են իռացիոնալ, քանզի նա ապավինում է «արյան կանչին», «ընդհանուր պատմությանը» եւ հիմնված է ժողովրդին հավատարիմ լինելու վրա, որն ունի որոշակի մշակութային բազա: Նման մոդելն ընդունված է անվանել «գերմանական»։ Իենց նրան են բոլորից մոտ ազգի եւ ազգայնականության մասին ռուսական պատկերացումները:

Ազգայնականության ֆենոմենը նման է այսբերգի. սոսկ վերնամասն է գտնվում մակերեւութին, իսկ մեծ մասը թաքնված է անմիջական հսկողությունից: Կախված սոցիալ-քաղաքական համատեքստից, ստորջրյա մասը բարձրանում է ջրի երես՝ մերկացնելով իր կլոր կամ սուր եզրերը:

Ազգայնականության ընկալման համար որոշիչ նշանակություն ունի առնվազն երեք տեսական-մեթոդաբանական սկզբունք, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը:

*Առաջին.* հարկավոր է ազգայնականությունը դիտարկել պատմական հեռանկարում՝ հասկանալով նրա տիպերի տարբերությունները (օրինակ՝ 18-րդ դարի եւ արդի ժամանակաշրջանի) եւ ըմբռնելով այն փաստը, որ յուրաքանչյուր կոնկրետ ազգայնականություն ընդունակ է փոխակերպ-

ման: Հանս Կոնը հաջողությամբ ներկայացրեց մման մոտեցումը՝ հետազոտելով Եվրոպան: Նրան է պատկանում այն հետեւությունը, թե ազգայնականության պատմությունը՝ դա ռացիոնալ սկզբի մշտական այլասերումն է խելահեղության, որն առավել վառ դրսեւորվեց ռացիոնալ-սոցիալիզմում՝ իր պատերազմներով, բռնությամբ, մեսիական ավտորիտարիզմով:

*Երկրորդ.* այդ նույն Կոնը Եվրոպային վերաբերող նյութում ցույց տվեց, թե ազգայնականության վերլուծության համար որքան կարեւոր է համեմատության, կրոսմշակութային սկզբունքը: Արժե համեմատել ազգի մասին վերջին երկու հարյուրամյակում ձեւավորված պատկերացումները. ա) «Ֆրանսիական», որը ելնում է պետության քաղաքացիների ազատ ընկերակցության գաղափարներից՝ հիմնված քաղաքական ընտրության վրա եւ բ) «գերմանական»՝ հիմնված մշակույթի եւ ընդհանուր ծագման վրա:

Սակայն, նաեւ այս վաղուց ստեղծված ձեւերը քարացած չեն: Էնթոնի Սմիթը, ավելի գլոբալ դիտարկելով ազգայնականության երեւոյթը, քան Եվրոպամետ Կոնը, հրաժարվեց կտրուկ հակադրել «արեւմտյան» (քաղաքացիական) ազգայնականությունը «արեւելյանին» (էթնոմշակութայինին): Վերջին հաշվով, երկու մոդելներն էլ ունեն ինչպես մշակութային, այնպես էլ տարածքային հենք:

*Երրորդ.* նույնիսկ այն ուսումնասիրողները, որոնք բացահայտորեն կանգնած են կառուցողական դիրքերում, ընդունում են (ինչպես, օրինակ՝ Ռոն Սունին) համատեքստի կարեւորությունը: Ազգայնականությունը առավել մեծ հաջողությունների հասավ այնտեղ, ուր դրան նախորդել էր որոշակի տարածքային, լեզվական կամ մշակութային ընդհանրության, ընդհանուր պատմական հիշողության առկայությունը, որն օգտագործվում է որպես սկզբնանյութ ինտելլեկտուալ ազգայնականության նախագծի համար: Շոտլանդական, բասկյան, էստոնական, լիտվական ազգայնականությունների փորձը հաստատում է այս հետեւությունը:

## **Ազգայնականության տիպերը**

Ուսումնասիրելով խորհրդային եւ հետխորհրդային տարածքում ազգամիջյան հարաբերությունները՝ մենք առանձնացրել ենք ազգայնականության վեց տիպ:

**Դասական ազգայնականություն** պետք է համարել այն, երբ մշակութային բոլոր հիմնավորումները (պետական լեզվի անհրաժեշտություն,

սեփական նորմատիվային, գեղարվեստական մշակույթի պահպանում), պատմական, աշխարհաքաղաքական, տնտեսական փաստարկները ենթարկվում են պետական ինքնուրույնության ընդլայնման, իսկ հետո եւ անկախության նպատակներին (սեցեսիա): Նման ազգայնականությունն ամենամեծ տարածումը ստացավ մերձբալթյան հանրապետություններում, որտեղ ազգայնականներն օգտագործեցին փաստարկների ողջ «փունջը»: Ռիբենտրոպ–Մոլոտով պակտի քննադատությունը, բնական պաշարների օգտագործման նկատմամբ վերահսկողության պահանջը, ինքնատնտեսավարման կոնցեպտը:

Մյուսը Ռուսաստանի Դաշնության հանրապետությունների վերնախավերի գաղափարախոսությունն ու քաղաքականությունն էր: Թաթարստանում, Բաշկիրիայում, Յակուտիայում, Տուվայում եւ մյուս հանրապետություններում (բացառությամբ Չեչնիայի) իշխող վերնախավերը Ռուսաստանից լիակատար անկախության հարց չդրեցին: Խոսք գնաց սոսկ «տարանջատված ինքնիշխանության» մասին, երբ իրավունքների մի մասը փոխանցվում է դաշնային կենտրոնին: Որոշ դեպքերում հայտարարվեց ֆինանսական, տնտեսական, մշակութային եւ քաղաքական ոլորտներում լայն իրավունքների, մյուսներում՝ հիմնականում բնական պաշարների եւ մշակույթի տնօրինման իրավունքի վրա: Իրավունքների ընդլայնման ամենաարտահայտիչ ձեւով պահանջները եղան Թաթարստանում՝ 1990–1994թթ.: Այսպիսինը կարելի է կոչել **պարիտետային ազգայնականություն:**

Գաղափարախոսության եւ քաղաքական պրակտիկայի կենտրոնում շրջանառվում էր հենց իրավունքների տարանջատումը՝ դրանց մի մասը դաշնային կենտրոնին ազատ փոխանցման սկզբունքով: Որպես հետեւանք, ենթադրվում էր այնպիսի քաղաքականության իրականացում, որի դեպքում շփվող էթնիկ խմբերն (Թաթարստանում, օրինակ, թաթարներն ու ռուսները) օգտվեն հավասար իրավունքներից, ինչն արտահայտվեց երկու պետական լեզուների օրենսդրական ճանաչմամբ, որը համընկնում էր հանրապետությունների քաղաքական ղեկավարության քննարկումներին եւ գերիշխում էր սոցիալական պրակտիկայում: Այնպիսի հանրապետություններում, ինչպիսիք են Բաշկիրիան ու Յակուտիան, գաղափարախոսական եւ քաղաքական ձգտումների կիզակետն ուղղվեց տնտեսական ու մշակութային ոլորտներին, սակայն առաջնայնությունը տրվեց այն գաղափարներին, որոնք համապատասխանում էին **տնտեսական ազգայնականությանը:**

Կարելիայում եւ Կոմիում, որտեղ տիտղոսակիր ազգությունները

ժողովրդագրական տեսանկյունից փոքրամասնություն էին կազմում, հիմնականում խոսքը մշակութային ինքնության, լեզվի պահպանման մասին էր, ինչը համապատասխանում է **մշակութային ազգայնականության** գաղափարներին:

Մյուս հանրապետություններում, մասնավորապես, Հյուս. Օսիայում եւ Ինգուշիայում, գերիշխում էին պաշտպանության գաղափարները. տարածքի պաշտպանություն, նրա վրա ազդեցություն, կորցրած հողերի վերադարձ: Պոլովժիեի գերմանացիները, օրինակ, փորձեցին վերականգնել իրենց ինքնավարությունը, իսկ ինգուշները՝ հասնել Ինգուշիայի ու Հյուս. Օսիայի վարչական սահմանի տեղափոխմանը եւ Մերձքաղաքային շրջանն իրենց հանրապետության կազմում փոխանցմանը:

**Պաշտպանական ազգայնականության** գաղափարներն առկա էին նաեւ ռուս ազգայնականության գաղափարախոսների շրջանում (Բայկալի էկոլոգիայի պաշտպանությունը, ռուսական գյուղի պաշտպանությունը «դերեւենչիկ» գրողների կողմից, գյուղացիության պաշտպանությունը, որն, ի դեմս կուլակաթափ արված եւ աքսորված աշխատավորների, կորցրել էր իր առավել ակտիվ հատվածը):

Հետխորհրդային տարածքում **արդիականացած ազգայնականության** գաղափարների կենսագործման փորձեր արվեցին: 1980-ականների վերջին եւ 1990-ականների սկզբին, երբ Տալլինից մինչեւ Վիլնյուս շարվել էր «Բալթյան շղթան», մոլորվացիները հիշեցին իրենց ազգակցությունը ռումինացիների հետ, Հայաստանը սկսեց պատերազմել Լեռնային Ղարաբաղի համար, իսկ Ռուսաստանի կենտրոնում երիտասարդ բարեփոխիչները դառնությամբ խոսում էին, թե ռուսական տարածաշրջաններից որքան միջոցներ են գնում ծայրամասեր: Ենթադրություններ էին արվում, որ եթե Ռուսաստանի ժողովրդավարացման ու արդիականացման նախագիծը հաջողվի, ապա «փախչող» հանրապետություններն իրենք կցանկանան մտնել Ռուսաստանի Դաշնության կազմի մեջ:

Արդիականացումը՝ որպես ինքնուրույնության օգտին գործող փաստարկ, առաջարկել են նաեւ տարածաշրջանային առաջնորդները. օրինակ, որ հողի մասնավոր սեփականության, բաց ներդրումների գաղափարները չի կարելի իրականացնել նախկին վարչակարգի վերականգնման ճանապարհով: Սովորաբար, արդիականացած ազգայնականությունը ծագում է բազմաէթնիկ պետությունների առավել զարգացած տարածքներում (օրինակ՝ Թաթարստանը Ռուսաստանի քիչ զարգացած տարածաշրջանների համեմատ, Կատալոնիան Իսպանիայի այլ մարզերի համեմատ եւ այլն):

## Ազգայնականությունը եւ պետությունը

Ազգայնականությունը պետության հետ կապից դուրս անհնարին է ընկալել: Ազգայնականությունը միշտ պետության նկատմամբ վերահսկողությունը գաղափարապես օրինականացնելու փորձ է: Միեւնույն ժամանակ, դա նաեւ հակազդում է պետության չափից դուրս միջամտությանը, որը զգում են նրա կազմի մեջ մտնող փոքրամասնությունները:

Միանգամայն բնական է, երբ բազմազգ պետությունում դաշնային կենտրոնը բնակչության հոմոգենացման ուղղությամբ ջանքեր է գործադրում՝ հույս ունենալով խուսափել ազգայնականություններն անջատողական շարժումների վերածվելուց: Սակայն, չնայած բոլոր բարի մտադրություններին, ընդհանրության զգացման ձեւավորումը հաճախ վերածվում է (լավագույն դեպքում) վարչարարական մեքենայի գործառույթի՝ արմատավորելով ունիֆիկացումը եւ ուծացումը: Եվ սոսկ այդ պատճառով նման փորձերը կարող են մերժվել կամ, առնվազն, քաղաքացիների կողմից քննադատաբար ընդունվել: Ընդ որում, դիմադրում են ոչ միայն փոքրամասնությունները: Ունիֆիկացման միտումը չի կարող հաճելի լինել նաեւ էթնիկ մեծամասնության բնակության տարածքների բնակիչներին:

Բազմիցս Յուլիս-արեւմուտքի տարբեր տարածաշրջաններում, Ուրալում, Յարավային դաշնային օկրուգում վիճակվում է լսել. «Կենտրոնը մեզ չի զգում», «Կենտրոնը հաշվի չի նստում մեր շահերի հետ, եւ դա խոչընդոտում է երկրում միասնության հաստատմանը»: Այլ էթնիկ խմբերով բնակեցված տարածաշրջաններում նման տրամադրություններն էթնիկ երանգ են ստանում:

Այդպես լինում է եւ մյուս, այդ թվում՝ նաեւ վաղեմի եւ ամուր ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրներում: Բելգիան, Կանադան, Շվեյցարիան չեն խուսափել էթնիկ ազգայնականության միտումներից: Ինչպես ցույց է տվել իր աշխատանքներում Ջոն Բրեյլին, ազգայնականությունը կարող է լինել հենց պետական ազգաշինության արդյունք: Նմանատիպ փորձարկումների ձախողված դեպքերը հակառակ արդյունք են տալիս՝ էթնիկ ազգայնականության էլ ավելի վառ արտահայտված ցայտումներ:

Դանիել Կոնվերսին ճշտում է. «Չափից ավելի «ջերմեռանդ» կենտրոնամետության ավելցուկը հաճախ է առաջացրել հոմեոստատիկ ռեակցիա, որն իր հերթին ծայրամասում ծնել է հզոր ազգայնական շարժում»: Ազգայ-

նականության վերելքի (որն ուղեկցում է հասարակության էթնիկական հոմոգենացման ուղղությամբ պետության ջանքերին) մասին է գրում նաև Թեդ Գուրը: Հենց պատասխան էթնիկ մոբիլիզացիան նպաստեց Իսպանիայում բասկյան ու կատալոնական ազգայնականության վերելքին՝ էթնիկ խմբի մշակութային մարկյորներին տալով քաղաքական երանգ: Նմանապես, 1990-ական թվականների սկզբին ռուս եւ ուկրաինացի փոքրամասնության կողմից ցավոտ ընդունվեց մոլդովական պետության խտրական քաղաքականությունը համապատասխան լեզուների օգտագործման նկատմամբ: Գրեթե նույն իրավիճակն էր ստեղծվել Հարավային Օսիայում եւ Աբխազիայում՝ կապված Վրաստանի 1980-ականների վերջի եւ 1990-ականների սկզբի քաղաքականության հետ: Թաթար մտավորականության մի մասի բողոքը ծնեց ՌԴ Պետական դումայի որոշումը՝ թաթարական գիրը կիրիլիցայից լատինականի փոխումն արգելելու մասին:

Հետխորհրդային տարածքի ազգային շարժումների մեծ մասում լեզուների կարգավիճակի շուրջ քաղաքական վեճերն, անշուշտ, մոբիլիզացնող դեր խաղացին: Արդի հասարակությունում լեզուն, նրա կարգավիճակը դառնում են սոցիալական ռեսուրս, ուստի էթնոազգայնականության գաղափարախոսները նրան ոչ պակաս կարելորություն են տալիս, քան այլ ռեսուրսների (բնական կամ քաղաքական) համար պայքարին: Ընդհանուր առմամբ, այս կամ այն ռեսուրսի շուրջ կոնֆլիկտում գաղափարախոսների կողմից անցկացվում են էթնիկ սահմաններ, որոնց մարկյորներն ամենից հաճախ մշակութային են:

Նման տիպի սահմանազատումների համար առիթ կարող են ծառայել նաև այլ շահեր: Օրինակ՝ ՌԴ հանրապետություններում ապրող ռուսների համար բաժանարար եղավ տարածաշրջանային կառավարմանը մասնակցության հնարավորությունը: Հենց սա էլ վերածվեց սոցիալական տեսակավորման եւ համադրման, իսկ որոշ դեպքերում նաև էթնիկ խմբերի հակադրման մեխանիզմի:

Հոգեբանները գտնում են, որ որքան փոքր են խտրությունները շփվող էթնիկ խմբերի միջեւ, այնքան ավելի մեծ ուժով են դրսևորվում գոյություն ունեցող տարբերություններով պայմանավորված պահանջները: Հավանաբար, այդ իսկ պատճառով, ինդոլատրացումը, ուրբանիզացիան եւ գլոբալացումը, ջնջելով էթնիկ սահմանները, չհանգեցրին դրանց անհետացման, որը կանխատեսվում էր ինչպես Մաքս Վեբերի ու Կառլ Մարքսի ժամանակներում, այնպես էլ գլոբալացման ժամանակակից տեսաբանների կողմից:

## **Ազատականության եւ ազգայնականության համատեղելիությունը**

Այն հարցին, թե կարող են, արդյոք, մի պետության տանիքի տակ խաղաղ գոյակցել միանգամից մի քանի ազգայնականություն, թերեւս տրվի դրական պատասխան: Ինքնին այն փաստի ընդունումը, որ ազգայնականությունը լինում է տարբեր, ենթադրում է, որ նրա որեւէ տեսակը, ձեւը որոշակի պայմաններում մեծ կամ փոքր չափով զուգորդվում է ազատականության ու ժողովրդավարության հետ:

Ազատական արժեքների հետ ազգայնականության համատեղելիության խնդիրը լայն ճանաչում ստացավ շնորհիվ Մայքլ Լինդի «Ի պաշտպանություն ազատական ազգայնականության» հոդվածի (Foreign Affairs, թիվ 3, 1994): Լինդը պնդում է, որ ազգայնականության հանդեպ անվստահությունը, անգամ նրա ազատական, ժողովրդավարական եւ սահմանադրական ձեւով, կոպիտ սխալ է: Նման անվստահությունը ենթադրում է ցանկացած՝ այդ թվում նաեւ բռնատիրական, բազմազգ պետության կուրորեն սատարում: Ազգայնականության՝ որպես հին անցյալի, դարձ ապրած երեւոյթի մասին պատկերացումը նախապաշարմունք է, որը չի համապատասխանում քաղաքական պրակտիկային: Անջատողականության ոչ բոլոր դեպքերն են վատ, իսկ ցանկացած գնով բազմազգ պետությունների ամբողջականության պաշտպանման քաղաքականությունը՝ ոչ միշտ լավ:

Արդարացի է եւ այն, որ մի (երբեմն նաեւ մի քանի) ազգի անջատումը չի նշանակում, թե յուրաքանչյուր բազմազգ պետություն պատրաստ է քանդվել, ինչպես թղթ տնակը: Իսկ պետության բազմազգ լինելը բնավ էլ չի հանդիսանում անհաղթահարելի արգելք նրա ժողովրդավարացման համար: Սոսկ կարելու է մշակել իշխանության բաշխման մեխանիզմ էթնիկ խմբերի միջեւ: Որպես հաջողված օրինակներ, Լինդը մեջբերում է Բելգիան, Կանադան, Շվեյցարիան: Նրա տեսանկյունից, չարժե վախենալ նաեւ Խորհրդային Միության կամ ժամանակակից Ռուսաստանի տիպի գերիզոր բազմազգ պետություններից, եթե, իհարկե, նրանք ստեղծվում են կամավորության սկզբունքով: Ստացվում է, որ ազգայնականությունը լիովին համատեղելի է ազատական արժեքների հետ՝ երկու կարեւորագույն պայմանների պահպանման դեպքում. մարդու կողմից սեփական ազգության ազատ ընտրության հնարավորություն եւ մշակութային փոքրամասնությունների իրավունքների խաղաղ ապահովում:

Ազատական արժեքների հետ ազգայնականության համատեղելիության հանդեպ հետաքրքրությունը, որը դեռ համեմատաբար վերջերս գաղափարախոսական անհեթեթություն էր թվում, աչքի առաջ աճում է: Եվ դա պատահական չէ: Էթնիկ զտումներ, ագրեսիվ անջատողականություն, ինքնորոշման հռչակում. այս բոլոր խնդիրներն Արեւմուտքը ստիպված է լինելու լուծել ոչ թե ծովերից անդին, այլ սեփական կամ հարեւան պետություններում: Ռուսաստանը եւս ստիպված է ազգայնականության արտաքին եւ ներքին մարտահրավերներին պատասխան փնտրել, որոնք աչքի առաջ դառնում են էլ ավելի հզոր ու բազմաբնույթ: Խնդիրն այստեղ ոչ միայն Կոսովոյի կամ Աբխազիայի կարգավիճակի հարցում երկրի ղեկավարության դիրքորոշումն է, այլեւ այն իրավիճակը, որը ստեղծվել է բուն ռուսական տարածաշրջաններում, ինչպես նաեւ այն, թե տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչները որքանով են ընդունակ գիտակցելու իրենց ընդհանրությունը եւ սեփական շահերի ոչ բռնի կենսագործման անհրաժեշտությունը:

*«Россия в глобальной политике»*

*թիվ 6, 2008*

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

|                                                                                                            |    |
|------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| Գազիկ Տեր-Հարությունյան<br>ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ .....                                        | 1  |
| Ռուբեն Մելքոնյան<br>ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԱԼՄԱՆ<br>ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....                             | 7  |
| Սեւակ Սարուխանյան<br>ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ .....                                              | 12 |
| Սարգիս Հարությունյան<br>ԱՄԵՐԻԿԱ - ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>ՀԵՌԱՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ .....                     | 16 |
| Արաքս Փաշայան<br>ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴՐԱՄԱ .....                                                                   | 20 |
| Սուրեն Մանուկյան<br>«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ–2025» .....                                                   | 27 |
| Ռոբերտ Կեյզան<br>«ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՊԱՀՊԱՆՎԻ ՄԵԿ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆ՝<br>ՄԻ ՔԱՆԻ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՄԲ» ..... | 35 |
| Լեոկադիա Դրոբիժեւա<br>ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....                                                 | 41 |

Շապիկին պատկերված է  
**Կատարո վանքը** Դիզափայտ լեռան գագաթին  
(Արցախ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՍ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: